Հավելված
ՀՀ կառավարության 2009 թվականի
դեկտեմբերի 3-ի N 1449 - Ն որոշման

ԱՄԲԱՐՁԻՉ ԱՇՏԱՐԱԿՆԵՐԻ (ՎԵՐՀԱՆՆԵՐԻ) ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ԵՎ ԱՆՎՏԱՆԳ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

ԿԻՐԱՌՄԱՆ ՈԼՈՐՏԸ

1. Ամբարձիչ աշտարակների (վերհանների) կառուցվածքի և անվտանգ շահագործման տեխնիկական կանոնակարգը (այսուհետ՝ տեխնիկական կանոնակարգ) մշակված է «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի և 6-րդ հոդվածի 3-րդ մասի կիրարկումն ապահովելու համար և սահմանում են տեխնիկական անվտանգության պահանջներ ամբարձիչ աշտարակների և վերհանների (այսուհետ՝ ամբարձիչներ) նախագծման, կառուցվածքի, պատրաստման, վերանորոգման և անվտանգ շահագործման նկատմամբ՝ աշխատանքային գոտու սահմաններում մարդկանց գործիքներով ու նյութերով տեղափոխման և աշխատանքների անվտանգ կատարման համար։

2. Սույն տեխնիկական կանոնակարգի պահանջները տարածվում են Հայաստանի Հանրապետության տարածքում իրավաբանական և ֆիզիկական անձանց կողմից շահագործվող հետևյալ տեսակի ամբարձիչ աշտարակների և վերհանների վրա՝

1) ինքնագնաց աշտարակներ և վերհաններ, այդ թվում՝

ա. ավտոմոբիլային աշտարակներ և վերհաններ,

բ. հատուկ հենասարքերի վրա աշտարակներ և վերհաններ,

գ. թրթուրավոր աշտարակներ և վերհաններ,

դ. երկաթուղային աշտարակներ և վերհաններ,

ե. օդաճնշական անվադողերով աշտարակներ և վերհաններ.

2) կցանքային (կցովի) աշտարակներ և վերհաններ, այդ թվում՝

ա. օդաճնշական անվադողերով աշտարակներ և վերհաններ,

բ. երկաթուղային աշտարակներ և վերհաններ.

3) շարժական աշտարակներ և վերհաններ, այդ թվում՝

ա. ինքնագնաց աշտարակներ և վերհաններ,

բ. ոչ ինքնագնաց աշտարակներ և վերհաններ.

4) կայմային աշտարակներ՝ տեղակայված հատուկ հենասարքերի վրա, այդ թվում՝

ա. ինքնագնաց աշտարակներ,

բ. կցանքային (կցովի) աշտարակներ,

գ. շարժական աշտարակներ։

3. Սույն տեխնիկական կանոնակարգի պահանջները չեն տարածվում 2-րդ կետում չներառված՝ մնացած բոլոր տեսակի ամբարձիչների վրա) այդ թվում՝

1) հրշեջային ամբարձիչների.

2) շինարարական բեռնատար ամբարձիչների.

3) բեռնամարդատար ամբարձիչների.

4) ճակատային ամբարձիչների.

5) ենթասալարկման միջոցների (փայտամածներ, լաստակներ, հարթակներ և այլն)։

II. ՏԵՐՄԻՆՆԵՐ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

4. Սույն տեխնիկական կանոնակարգում կիրառված տերմինները և հասկացություն-ներն ունեն հետևյալ իմաստը՝

1) ամբարձիչ վերհան՝ սպասարկման գոտու սահմանումներում տարածության մեջ գործիքների հետ մարդկանց տեղափոխման և աշխատանքների կատարման համար նախատեսված ընդհատվող գործողության բեռնամբարձ մեքենա.

2) ամբարձիչ աշտարակ՝ ուղղահայաց ուղղություններով (վերև, ներքև) գործիքներով և նյութերով մարդկանց տեղափոխման և աշխատանքների կատարման համար նախատեսված ընդհատվող գործողության բեռնամբարձ մեքենա.

3) հատուկ հենասարքի վրա կայմային տեսակի ամբարձիչ՝ ուղղահայաց ուղղություններով (վերև, ներքև) գործիքներով և նյութերով մարդկանց տեղափոխման և աշխատանքների կատարման համար նախատեսված ընդհատվող գործողության բեռնամբարձ մեքենա՝ տեղակայված հատուկ հենասարքի վրա.

4) փոխագուցավոր ամբարձիչ՝ ճոճանի թռիչքի կամ բարձրության անհրաժեշտ մեծությունն ապահովող, սլաքի դուրս հանվող տարրերով ամբարձիչ.

5) ծնկավոր ամբարձիչ՝ ճոճանի թռիչքի կամ բարձրության անհրաժեշտ մեծությունն ապահովող, միաձունկ, երկձունկ, եռաձունկ տարրերով ամբարձիչ.

6) ինքնագնաց (վերհաններ, աշտարակներ)՝ աշխատանքային հրապարակում և ճանապարհներով տեղաշարժման համար մեխանիզմով սարքավորված ամբարձիչ՝

ա. ավտոմոբիլային ամբարձիչներ (վերհաններ, աշտարակներ)՝ ավտոմոբիլի հենասարքի վրա հավաքած ամբարձիչ,

բ. հատուկ հենասարքի վրա ամբարձիչ (վերհան, աշտարակ)՝ ավտոմոբիլի հատուկ հենասարքի վրա հավաքած ամբարձիչ,

գ. օդաճնշական անվադողով ամբարձիչ (վերհան, աշտարակ)՝ օդաճնշական անվադողերով հենասարքի վրա հավաքած ամբարձիչ,

դ. թրթուրավոր ամբարձիչ (վերհան, աշտարակ)՝ թրթուրավոր հենասարքի վրա հավաքած ամբարձիչ,

ե. երկաթուղային ամբարձիչ (վերհան, աշտարակ)՝ երկաթուղային սայլակի վրա հավաքած և երկաթուղով տեղաշարժվող ամբարձիչ.

7) կցանքային (կցովի) ամբարձիչներ (վերհաններ, աշտարակներ)՝ մեխանիզացված փոխադրամիջոցների օգնությամբ տեղափոխվող ամբարձիչներ՝

ա. օդաճնշական անվադողով կցանքային (կցովի) ամբարձիչ (վերհան, աշտարակ)՝ մեխանիզացված փոխադրամիջոցով քարշակվող օդաճնշական անվադողերով հենասարքի վրա հավաքած ամբարձիչ,

բ. երկաթուղային կցանքային (կցովի) ամբարձիչ (վերհան, աշտարակ)՝ երկաթուղային հենահարթակի վրա հավաքած և երկաթուղային փոխադրամիջոցով երկաթուղով տեղափոխվող ամբարձիչ.

8) շարժական ամբարձիչներ (վերհաններ, աշտարակներ)՝ մեխանիզացված փոխադրամիջոցով տեղափոխվող ամբարձիչներ՝

ա. ինքնագնաց շարժական ամբարձիչ (վերհան, աշտարակ)՝ աշխատանքային հրապարակում շարժման համար մեխանիզմով սարքավորված և ճանապարհներով մեխանիզացված փոխադրամիջոցով տեղափոխվող ամբարձիչ,

բ. ոչ ինքնագնաց շարժական ամբարձիչ (վերհան, աշտարակ)՝ աշխատանքային հրապարակում ձեռքով տեղաշարժվող և ճանապարհներով մեխանիզացված փոխադրամիջոցով տեղափոխվող ամբարձիչ.

9) հիդրավլիկ ամբարձիչ (վերհան, աշտարակ)՝ մեխանիզմների հիդրավլիկ շարժաբերով ամբարձիչ.

10) էլեկտրական ամբարձիչ (վերհան, աշտարակ)՝ մեխանիզմների էլեկտրական շարժաբերով ամբարձիչ.

11) մեխանիկական ամբարձիչ (վերհան, աշտարակ)՝ մեխանիկական շարժաբերով ամբարձիչ.

12) ճոճան (հարթակ, զամբյուղ)՝ գործիքներով և նյութերով մարդկանց տեղավորման համար նախատեսված պաշտպանակ ունեցող ամբարձիչի տարր.

13) ժապավենային արգելակ՝ արգելակ, որի մոտ արգելակումն իրագործվում է արգելակման փոկանիվին ժապավենի սեղմման միջոցով.

14) սահմանային բեռի սահմանափակիչ՝ ամբարձիչի ճոճանի վրա բեռնվածության որոշման համար նախատեսված և անվանական բեռնվածության հասնելու (գերազանցելու) դեպքում նախազգուշական ազդանշան տվող՝ ամբարձիչի մեխանիզմներն ավտոմատ անջատող սարք.

15) ճոճանի կողմնորոշման կարգահետևիչ համակարգ՝ ամբարձիչի ծնկների դիրքի փոփոխման դեպքում ճոճանի հատակը հորիզոնական դիրքում կողմնորոշելու ապահովման համար նախատեսված հատուկ համակարգ.

16) սպասարկման գոտու սահմանափակիչ՝ ճոճանի սպասարկման գոտու սահմաններից դուրս գալու ելքը բացառող և ամբարձիչի մեխանիզմն ավտոմատ անջատման համար նախատեսված ապահովիչ սարքվածք.

17) ճոճանի վթարային իջեցման համակարգ՝ ծնկների բարձրացման մեխանիզմների շարժաբերի խափանման դեպքում ճոճանի վթարային իջեցման համար նախատեսված սարքվածք.

18) հողմաչափ՝ քամու արագությունը (ուժը) որոշող սարք.

19) ծունկ (սլաք)՝ ճոճանի թռիչքի կամ բարձրացման բարձրության անհրաժեշտ մեծությունն ապահովող, ամբարձիչի աշխատանքային սարքավորումների մետաղակառուցվածքի տարր.

20) բարձրացման բարձրություն՝ հիմքից, որի վրա կանգնած է ամբարձիչը, ուղղաձիգի ուղղությամբ ամենամեծ հեռավորությունը, մինչև վերևի դիրքում գտնվող ճոճանի հատակը՝ գումարած 1,5 մ.

21) իջեցման խորություն՝ հիմքից որի վրա ուղղաձիգ դիրքով կանգնած է ամբարձիչը, մինչև ամենացածր դիրքում գտնվող ճոճանի հատակ եղած ամենամեծ հեռավորությունը.

22) սպասարկման գոտի՝ տարածության տիրույթը, որի սահմաններում ապահովված է ճոճանում աշխատելու հնարավորությունը.

23) հողմաբեռնվածություն՝ հորիզոնական ուղղությամբ ընդունվող քամու ճնշումից առաջացող բեռնվածությունը.

24) կայունություն՝ կործանման (տապալման) գործոնների հանդեպ ամբարձիչի հակազդման ունակությունը.

25) կայունության գործակից՝ վերականգնող մոմենտի հարաբերությունը կործանման (տապալման) մոմենտին.

26) մասնագիտացված կազմակերպություն՝ կազմակերպություն, որն օրենքով սահմանված կարգով կատարում է ամբարձիչների նախագծման, վերակառուցման (վերազինման), վերանորոգման աշխատանքներ, մշակում է նորմատիվ փաստաթղթեր, իրականացնում է տեխնիկական զննման և արատորոշման գործառույթներ.

27) շարժական հենարաններ՝ աշխատանքների կատարման ժամանակ ամբարձիչի կայունության ավելացման համար նախատեսված շարժական (դուրս հանվող, ներս քաշվող) հենարաններ.

28) առաձգական կախոցների անջատիչ՝ հեծանի հետ ամբարձիչի հենոցի աշխատանքի անջատման համար նախատեսված սարքվածք.

29) կողային կայունության կայունարար՝ շարժման ժամանակ շրջադարձի դեպքում ամբարձիչի ընթացային մասի կախոցների առաձգական հավասարակշռության ձևախեղումների հավասարեցման սարքվածք.

30) պարբերաշրջան (ցիկլ)՝ ճոճանի աշխատանքային գործողությունների ամբողջություն՝ մուտք ճոճան, բարձրացում առավելագույն բարձրության վրա և իջեցում« «նստեցում» դիրք, ելք ճոճանից.

31) անվտանգության սարքեր՝ էլեկտրոնային (կամ մեխանիկական) տեսակի տեխնիկական սարքվածք՝ նախատեսված վթարային (կամ նրանց նախազգուշացման) իրավիճակներում մեխանիզմների անջատման համար.

32) հաշվարկային տարրեր՝ տարրեր, որոնց նյութերի ֆիզիկաքիմիական և ֆիզիկամեխանիկական հատկությունների, թույլատրելի լարումների մեծությունների և բեռնվածքների հիման վրա տեխնիկական պայմաններով և նախագծային փաստաթղթերով կատարված են պատասխանատու տարրերի ամրության և կայունության ապահովման հաշվարկներ։

III. ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ

ԱՄԲԱՐՁԻՉՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

5. Ամբարձիչները, հավաքական մասերը (հենասարքեր, ծնկներ (սլաքներ), մեխանիզմներ, ճոճաններ, անվտանգության սարքեր և այլն) պետք է պատրաստված լինեն դրանց արտադրման տեխնիկական պայմաններին, մասնագիտացված կազմակերպությունների կողմից մշակված և հաստատված նախագծերին համապատասխան և ծառայության մեջ մտնելու օրվանից ապահովեն անվտանգ շահագործում, բավարարեն Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 15-ի N 2390-Ն որոշմամբ հաստատված «Մեքենաների և մեխանիզմների անվտանգությանը ներկայացվող պահանջներ» տեխնիկական կանոնակարգի և սույն տեխնիկական կանոնակարգով սահմանված անվտանգությանը ներկայացվող պահանջներին։

6. Ամբարձիչների և նրա հավաքական մասերի պատրաստման համար օգտագործվող նյութերի (հիմնական և եռակցման) ֆիզիկաքիմիական և ֆիզիկամեխանիկական հատկությունները (հոսունության սահման, ամրության սահման, հարաբերական երկարացում, ծռման անկյուն, հարվածային մածուցիկություն)՝ հատկապես հոգնածության,

քայքայման, հնացման և մաշվածության գործոններին դիմակայելու տեսանկյունից, պետք է համապատասխանեն արտադրողի կողմից նախատեսված բեռնվածությանը, և շահագործման ժամանակ դիմանան այն բեռնվածություններին, որոնց ամբարձիչները ենթարկվում են:

7. Ամբարձիչները (կցանքային (կցովի) պետք է սարքավորված լինեն քարշակման և միացման համապատասխան միջոցներով, բեռնման և գետնին ամրակման համար հենահարթակի հենականգնակով, որոնք պետք է նախագծված և արտադրված լինեն այնպես, որպեսզի ապահովեն դրանց հեշտ և անվտանգ միացումը կամ անջատումը, ինչպես նաև օգտագործման ժամանակ բացառեն պատահական անջատումը:

8. Ամբարձիչները և նրա հավաքական մասերը պետք է նախագծվեն և արտադրվեն այնպես, որպեսզի չկորցնեն իրենց ֆիզիկական կայունությունը մինչև այն աստիճանը, որը կարող է վտանգել օգտագործողին ու սպասարկող անձնակազմին և ունենան համապատասխան մեխանիկական ամրություն, որ շահագործման ընթացքում դիմակայեն բոլոր հնարավոր ազդեցություններին, ինչպես նաև մնան անվտանգ՝ նույնիսկ հնարավոր անզգույշ գործողություններ կատարելու դեպքում:

9. Ամբարձիչների տեխնիկական անձնագրերի և դրանց կցված փաստաթղթերին պետք է կցված լինեն վերջիններիս՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հայերեն թարգմանությունները:

10. Ամբարձիչների շահագործման փաստաթղթերում պետք է նշված լինեն դրանց անվտանգ տեղակայման, վերանորոգման և շահագործման համար անհրաժեշտ ու բավարար տեղեկատվությունը:

11. Ամբարձիչների անվտանգության սարքերը և սարքվածքները, պաշտպանական սարքերը և անջատիչները պետք է օգտագործվեն ըստ իրենց անվանական արժեքների և պետք է դիմանան համապատասխան փորձարկումներին ու պետք է արտադրված լինեն այնպես, որպեսզի նրանց անսարքությունները չառաջացնեն անվտանգության պահանջ-

ների խախտում և չստեղծեն էլեկտրական հոսանքից առաջացող վտանգ, ինչպես նաև պետք է տեղում անվտանգ ամրակապված լինեն։

12. Ամբարձիչները, որոնք նախագծված և պատրաստված են պայթյունահրդեհավտանգ շինություններում և արտաքին միջավայրում շահագործման համար, պետք է տեխնիկական փաստաթղթերում՝ անձնագրում, ինչպես նաև շահագործման հրահանգում, նշված լինի ամբարձիչի պայթյունահրդեհավտանգ միջավայրում (միջավայրի կարգի ցուցումով) աշխատելու հնարավորությունը։

13. Ամբարձիչների շարժիչները (էլեկտրական, հիդրավլիկ, մեխանիկական) պետք է նախագծվեն և արտադրվեն այնպես, որ երկարատև նորմալ շահագործման պայմաններում նվազեցվի էլեկտրական կամ հիդրավլիկական կամ մեխանիկական անսարքությունների հավանականությունը, որոնք կարող են բերել անվտանգության խախտմանը, ինչպես նաև մեկուսացումը կամ հիդրոհեղուկը կամ մեխանիկական մասերը չպետք է վնասվեն, իսկ հպակները և միացումները կամ հիդրոհամակարգի հերմետիկությունը տաքացման և թրթռման ժամանակ չպետք է խախտվեն։

14. Ամբարձիչների էլեկտրասարքավորումների կառուցվածքը չպետք է ունենա օգտագործողի համար վտանգ ներկայացնող սուր եզրեր և անկյուններ, արտադրվեն այնպես, որ շահագործման պայմաններում բացառվեն կառավարման բոլոր մասերի (կոթեր, կոճակներ, բռնակներ, լծակներ), ցանկացած հաղորդալարի, պտուտակի, մանեկի, տափօղակի, զսպանակի և այլ նմանատիպ մասերի թուլացման հնարավորությունը, ինչպես նաև թուլացումը կամ անջատումը չպետք է վտանգ առաջացնեն մարդու կյանքին և առողջությանը։

15. Ամբարձիչների էլեկտրասարքավորումների շահագործման ժամանակ առաջացող թրթռաձայնային ազդեցությունը չպետք է գերազանցի մարդու և շրջակա միջավայրի վրա վնասակար ազդեցության թույլատրելի մակարդակը։

16. Ամբարձիչները, բացի տաքացվող շինությունների մեջ նախատեսված շահագործումից, պետք է պատրաստվեն նաև մինուս 40⁰C-ից մինչև պլյուս 40⁰C-ի ջերմաստիճանի ու մինչև 10 մ բարձրության վրա քամու 10 մ/վրկ-ից ոչ ավելի արագության պայմաններում աշխատելու համար։

17. Մինուս 40⁰C-ի ջերմաստիճանից ցածր պայմաններում աշխատելու համար նախատեսվող ամբարձիչները պետք է նախագծվեն և պատրաստվեն տեխնիկական առաջադրանքի հիման վրա, չափավոր ցուրտ (УХЛ) կամ ցուրտ (ХЛ) կլիմայական կատարմամբ, որը պետք է համապատասխանի տեխնիկական պայմանների և չափորոշիչ փաստաթղթերում շարադրված հատուկ պահանջներին։

18. Նախագծի (գծագրերի) կամ հաշվարկների մեջ կատարվող բոլոր փոփոխությունները, որոնք կարող են առաջանալ ամբարձիչի պատրաստման կամ վերանորոգման ժամանակ, պետք է փոխհամաձայնեցվեն նախագիծ մշակող, պատրաստող-վերանորոգող կազմակերպությունների կամ պատվիրատուի միջև։

19. Ամբարձիչի հիմնական տեխնիկական բնութագրերը, այդ թվում՝ բեռնամբարձությունը և այլ պարամետրեր պետք է համապատասխանեն նրա անձնագրի և կից տեխնիկական փաստաթղթերի նշված տվյալներին։

20. Ամբարձիչների աշխատանքն սպասարկման գոտուց դուրս արգելվում է։

21. Ամբարձիչների կառուցվածքում պետք է նախատեսվեն՝

1) կառավարման, տեխնիկական սպասարկման, վերանորոգման հարմարավետություն.

2) քարշակման հնարավորություն.

3) ամբարձիչի հիդրոհամակարգի տարրերի փոխումն առանց ամբողջ հիդրոհամակարգի աշխատանքային հեղուկի դատարկման.

4) աշխատանքային շարժումների սահուն թողարկում և կանգառք ապահովող շարժաբերի կառուցվածք։

22. Ամբարձիչները պետք է սարքավորված լինեն աշխատատևության մեքենաժամերով հաշվառման սարքվածքով։

23. Միացման համար մեխանիկական հարմարանքներով սարքավորված ամբարձիչների մեխանիզմները պետք է այնպես կառուցված լինեն, որ բացառեն նրանց ինքնակամ միացումը։

24. Ամբարձիչի ոլորող մոմենտ հաղորդող մեխանիզմների հանգույցներում կցորդվող մասերի ինքնակամ պտտումից և անջատումից խուսափելու համար պետք է օգտագործվեն պտտումը բացառող փորակային, երիթային, հեղյուսային և այլ միացություններ։

25. Ամբարձիչի հենարանապտտող կառուցվածքների ամրացման համար զսպանակային տափօղակների օգտագործումն արգելվում է։

26. Ամբարձիչի առանձին հանգույցների համար հենարան ծառայող անշարժ առանցքների տեղաշարժումը բացառելու համար պետք է դրանք հուսալի ամրացված լինեն։

27. Ամբարձիչների մոտ դուրս հանվող հատվածամասերով փոխագուցավոր սլաքներն աշխատանքային վիճակում գտնվելու ժամանակ պետք է դուրս հանված հատվածամասերի հուսալի ամրացման սեռակում ունենան։

28. Ճոճանի հորիզոնական դիրքում կողմնորոշման կարգահետևիչ համակարգի ճոպանների, շղթաների և ձգաճոպանների (ձգաձողերի) ուղղորդիչները պետք է այնպես կառուցված լինեն, որ բացառեն դրանց ինքնակամ դուրս գալը հոլովակներից, աստղիկներից, թմբուկներից և ձգաճոպանի (ձգաձողի) լռվումից։

29. Ամբարձիչների տուփաձև և խողովակաձև մետաղակառուցվածքները պետք է նախագծված և պատրաստված լինեն այնպես, որ բացառեն խոնավության ներթափանցման և կուտակման հնարավորությունները, ապահովեն հերմետիկությունը։

30. Մշտական տեխնիկական սպասարկում պահանջող մեխանիզմների, կառավարման համակարգի ապահովիչ սարքերի համար, արտադրողը պետք է նախատեսի և ապահովի սպասարկող անձնակազմին վնասվածքներից պաշտպանելու համար, նրանց հարմար և անվտանգ մոտեցման հնարավորություն։

31. Բեռնային կայունության գործակիցը, հաշվի առնելով մեքենայի և բեռի ծանրության ուժերի ազդեցությունը, դինամիկական ազդեցությունները, ինչպես նաև քամու ճնշումը, հաշվարկների կատարման ժամանակ պետք է լինի 1,15-ից ոչ պակաս։

32. Ամբարձիչները շարժական հենարանների վրա տեղակայման դեպքում տեղակայման թեքությունը չպետք է գերազանցի $0^0 30'$, իսկ առանց շարժական հենարանների ամբարձիչների համար՝ 3^0, եթե շահագործման հրահանգում մեծ թեքություն նախատեսված չէ։

33. Երկաթուղային հենահարթակների վրա տեղակայված ամբարձիչների համար պետք է հաշվի առնել երկաթուղու կոր տեղամասերում մի ռելսը մյուսի նկատմամբ առավելագույն թույլատրելի գերազանցումը։ Ռելսակալների (բռնիչների) ազդեցությունը կայունության որոշման ժամանակ հաշվի չի առնվում։

34. Ամբարձիչ սեփական կայունության գործակիցը պետք է 1,15-ից ոչ պակաս լինի, հաստատվի հաշվարկով և բնութագրի ամբարձիչի բոլոր մասերի ծանրության ուժով՝ հաշվի առնելով հարթակի թեքությունը շրջման ուղղությամբ (շրջման կողի նկատմամբ) և նույն ուղղությամբ փչող քամու հողմաբեռնվածության ուժով առաջացող ստեղծած մոմենտի հարաբերությունը։

35. Ամբարձիչի կառուցվածքի ամրության հաշվարկը պետք է հաստատվի նախնական փորձարկումների ընթացքում կատարվող գործիքային տենզոմետրական փորձարկումներով։

IV. ԱՄԲԱՐՁԻՉՆԵՐԻ ԵՎ ԲԱՂԿԱՑՈՒՑԻՉ ՄԱՍԵՐԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

1. ՃՈՃԱՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

36. Հողի մակերևույթներից կամ նստեցման հարթակից մինչև ճոճանի մուտքը և ամբարձիչի պտտվող հենահարթակի միջև եղած բարձրությունը պետք է լինի 400 մմ-ից ոչ ավելի, ընդ որում, աստիճանները և ճոճանի հատակը չպետք է սայթաքող լինեն։

37. Ամբարձիչների ճոճանը (զամբյուղ, հարթակ) պետք է 1000 մմ-ից ոչ պակաս բարձրությամբ ցանկապատ ունենա։ Ճոճանի բազրիքի վերևի հարթությունը պետք է հարմար լինի ձեռքով ընդգրկման համար և երեսապատված լինի ցածր ջերմահաղորդիչ նյութով։ Երեսարկման շրջագծով պետք է լինի 100 մմ-ից ոչ պակաս բարձրությամբ չընդհատ-վող թիթեղվածք։ Թիթեղվածքի և բազրիքի՝ մինչև երեսարկումից 500 մմ բարձրության վրա ցանկապատի շրջագծի ամբողջ երկարությամբ պետք է լինի լրացուցիչ զոլակ։ Ճոճանների մուտքի որմնանցքը պետք է պաշտպանված լինի հանովի ցանկապատով կամ փակվող դռնով։

38. Պլաստիկ հատակով կամ մուտքի որմնանցք չունեցող ճոճանների համար թույլատրվում է մուտքը ճոճան կատարել վերևից, այդ դեպքում պետք է նախատեսվեն մուտքը հեշտացնող հարմարանքներ։

39. Ճոճանի հատակի չափը պետք է լինի 600x600 մմ-ից ոչ պակաս, իսկ կլոր ճոճանի տրամագիծը՝ 700 մմ-ից ոչ պակաս։

40. Ճոճանի հատակը մեկ մարդու համար պետք է լինի 0,5 քառ. մետրից ոչ քիչ, իսկ մուտքի դռնակի լայնությունը 500 մմ-ից ոչ քիչ, ընդ որում, հատակը պետք է ունենա հակասահող ծածկույթ, իսկ դռնակը պետք է բացվի այն ուղղությամբ, որպեսզի բացառվի դրանց անսպասելի բացվելու ժամանակ ճոճանում գտնվող մարդկանց դուրս ընկնելու ռիսկը։

41. Մինչև 1000 Վ լարման էլեկտրացանցեր սպասարկման համար ճոճանի կառուցվածքը և տեղակայումը պետք է ապահովի 0,5 ՄՕհմ-ից ոչ պակաս գալվանական մեկուսության մեկուսացում՝ մետաղակառուցվածքի և ճոճանի միջև։

42. Ամբարձիչի ճոճանը պետք է սարքավորված լինի աշխատողների անվտանգության գոտիների զսպանակակեռիկների ամրացման համար ճարմանդներով և գործիքների համար ճոպանով։

43. Ճոճանների ցանկապատի տարրերը և գոտիների ամրացման տեղերը պետք է դիմանան 1300 Ն (130 կգ-ից) ոչ պակաս տարբեր ուղղություններով կենտրոնացված բեռնվածությանը։

2. ՃՈՊԱՆՆԵՐԻՆ ԵՎ ՇՂԹԱՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

44. Ամբարձիչում օգտագործվող պողպատյա ճոպանները և շղթաները պետք է ունենան պատրաստող կազմակերպության կողմից դրանց փորձարկման մասին որակը հաստատող փաստաթուղթ։

45. Արգելվում է օգտագործել պողպատյա ճոպաններ և շղթաներ, որոնք չունեն պատրաստող կազմակերպության կողմից դրանց փորձարկման մասին որակը հաստատող փաստաթուղթ։

46. Ամբարձիչների վրա ճոպանների ամրացումը և տեղադրումը պետք է բացառեն դրանց դուրս ընկնելը ճախարակներից կամ այլ մեխանիզմներից, ինչպես նաև ճոպանների տրորումը կառուցվածքի տարրերի կամ միմյանց հետ շփման հետևանքով։ Ճախարակից ճոպանի դուրս ընկնելը բացառող սարքվածքի և ճոպանի միջև եղած բացակը պետք է լինի ճոպանի տրամագծի 20 տոկոսից ոչ ավելի։

47. Ճոպանի ծայրի ամրացումը պետք է կատարվի հանգուցաօղակի օգտագործմամբ, ճոպանի ազատ ծայրը հյուսելով, սեղմակների տեղադրմամբ կամ տեխնիկական

պայմաններով և փաստաթղթերում նշված այլ միջոցներով։ Սեղմնակների քանակը չպետք է 3-ից պակաս լինի։

48. Ամբարձիչների վրա ճոպանները չպետք է ունենան ոչ մի կցվանք, իսկ ճոպանների ծայրերը կարող են ամրացվել պողպատյա, կռված, դրոշմած կամ ձուլված վռանին սեպով։ Եռակցված վռանների օգտագործումն արգելվում է։ Վռանի և սեպի իրանը սուր ծայրեր չպետք է ունենա։

49. Եթե ամբարձիչի վրա ճոպանի փոխման ժամանակ ճոպանի սերտիֆիկատում նշված է խզման գումարային ճիգը, ապա հաշվարկային (Ճ) ճիգը պետք է որոշվի խզման գումարային ճիգը 0,83-ով բազմապատկելու միջոցով։

50. Ծնկների, փոխհագուցավոր հատվածամասերի և ճոճանի կողմնորոշման կարգահետևիչ համակարգի բարձրացման համար մեխանիզմներում օգտագործվող պողպատյա ճոպանները և շղթաները նախագծման ժամանակ պետք է ստուգվեն հաշվարկով։

51. Ճոպանի կամ շղթայի ամրության հաշվարկը կատարվում է հետևյալ բանաձևով՝

$$Ճ/Լ \geq Գ$$

Ճ – սերտիֆիկատով ընդունվող ամբողջ ճոպանի կամ շղթայի խզման ճիգն է Ն (Նյուտոն) (կգ),

Լ - ճոպանի ճյուղի առավելագույն լարվածություն է՝ հաշվի առնելով բազմաճախարակի օգտակար գործողության գործակիցը և շղթայի դինամիկ բեռնվածությունը կամ ճիգը Ն (կգ),

Գ - ամրության պաշարի գործակիցն է, որը չպետք է փոքր լինի 9-ից։

Հավասարակշռող սարք ունեցող երկու զուգահեռ ճյուղերից կազմված ճոճանի կողմնորոշման կարգահետևման համակարգում յուրաքանչյուր ճյուղի համար Գ-ն պետք է լինի 4,5-ից ոչ պակաս։

3. ԹՄԲՈՒԿՆԵՐԻՆ ԵՎ ՃԱԽԱՐԱԿՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ

ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

52. Ամբարձիչների վրա լրացուցիչ բեռնամբարձող սարքավորումների (կեռային կախիչներ, կեռեր, ճախարակներ, թմբուկներ) տեղադրում թույլատրվում է այն դեպքում, եթե տեխնիկական պայմաններով և փաստաթղթերով կամ շահագործման հրահանգով կամ անձնագրով այդ սարքավորումների տեղադրումը չի արգելվում։

53. Թմբուկի ճոպանաունակությունը պետք է լինի այնպես, որպեսզի ճոճանի ամենացածր (ամենաբարձր) հնարավոր դիրքում գտնվելու ժամանակ թմբուկում մնա ճոպանի՝ ամենաքիչը 1,5 գալար՝ չհաշված սեղմիչ սարքերի տակ մնացած գալարները։

54. Ճոպանի բազմաշերտ փաթաթման համար թմբուկները երկու կողմից պետք է անվապռունկ ունենան։ Թմբուկի անվապռունկները պետք է փաթաթված ճոպանի վերին շերտից բարձր լինեն ոչ քիչ, քան ճոպանի տրամագծի կրկնակին։

55. Ամբարձիչի կառուցվածքում օգտագործվող պողպատյա ճոպանով պարուրվող ճախարակի կամ թմբուկի նվազագույն տրամագիծը որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$S \geq hտ$$

որտեղ՝

S - ն միջին գծով չափված ճախարակի կամ թմբուկի տրամագիծն է, մմ,

տ- ն ճոպանի տրամագիծն է, մմ,

h- ն ճախարակի տրամագծի ընդունման գործակիցն է, որի արժեքն ընդունվում է հավասար 16-ի։

4. ԸՆԹԱՑԱՅԻՆ ԱՆԻՎՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

56. Ավտոճանապարհներով երթևեկելու համար նախատեսված ինքնագնաց և կցանքային (իր հենասարքով) ամբարձիչների ընթացային անիվները պետք է ունենան ստանդարտ օդաճնշական դողեր և համապատասխանեն Հայաստանի Հանրապետության

կառավարության 2004 թվականի նոյեմբերի 11-ի N 1558-Ն որոշմամբ հաստատված «Օդաճնշական դողեր» տեխնիկական կանոնակարգի պահանջներին։

57. Ավտոմոբիլներով կամ այլ փոխադրամիջոցով փոխադրվող և աշխատանքային հրապարակում ձեռքով տեղաշարժվող ամբարձիչների համար թույլատրվում է օգտագործել տեխնիկական փաստաթղթերին համապատասխան այլ ընթացային անիվներ։

5. ՀԵՆԱՐԱՆՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

58. Ամբարձիչների շարժական հենարանների կամ նրանց մասերի ձեռքով բարձրացման (դուրս քաշման) ճիգը պետք է լինի ոչ ավելի, քան 200 Ն (20 կգ)։ Ավելի մեծ ճիգի դեպքում շարժական հենարանները պետք է հիդրավլիկ կամ այլ շարժաբեր ունենան։ Հրապարակների վրա ամբարձիչների տեղակայման ժամանակ պետք է հաշվի առնել գրունտի կարգը։ Ամբարձիչը բոլոր շարժական հենարանների վրա տեղակայելու դեպքում անիվները պետք է ազատվեն բեռնվածությունից, եթե կամրջակները և անիվները մասնակցում են պահող մոմենտի առաջացման գործոնին։

59. Շարժական հենարաններ չունեցող ամբարձիչները պետք է սարքավորված լինեն առաձգական կախոցների գործողությունը բացառող սարքավորումներով։

60. Ամբարձիչներն առաձգական կախոցների կայունարարով սարքավորման անհրաժեշտությունը, որը թույլ կտա շարժման ժամանակ շրջադարձերում բեռնվածությունը հավասար փոխանցելու մեկ ընթացային առանցքի բոլոր զսպաններին, դրանց հավասարաչափ ճկվելն ապահովելու համար պետք է որոշվի նախագծողի (մշակողի) կողմից։

6. ԱՐԳԵԼԱԿՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

61. Ամբարձիչի վերհանման մեխանիզմները պետք է ապահովված լինեն դրա միացման ժամանակ ճոճանի ինքնակամ իջեցումը (տեղաշարժը) բացառող՝ ավտոմատ անջատվող, նորմալ փակ տեսակի արգելակներով կամ այլ սարքավածքներով։

62. Ժապավենային արգելակների օգտագործումը թույլատրվում է միայն հենահարթակի պտտման մեխանիզմներում։

63. Արգելակները պետք է պաշտպանված լինեն յուղի և խոնավության ներթափանցումից։

64. Ամբարձիչի հենարանապտտող կառուցվածքի շարժաբերը պետք է լինի ինքնարգելակվող կամ սարքավորված լինի արգելակով, ընդ որում, արգելակման պաշարի գործակիցը պետք է լինի 1,5-ից ոչ պակաս։

65. Ամբարձիչի ճոպանային շարժաբերով բարձրացման մեխանիզմում պետք է նախատեսվի ճոճանի ինքնակամ իջեցումը բացառող սարքվածք։

66. Ավտոմոբիլային, կցանքային (կցովի), շարժական և հատուկ հենասարքերի վրա ամբարձիչները պետք է սարքավորված լինեն կայանման արգելակներով և համապատասխանեն Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի հունիսի 28-ի N 955-Ն որոշմամբ հաստատված՝ ճանապարհային երթևեկության կանոններ և տրանսպորտային միջոցների շահագործումն արգելող անսարքությունների և պայմանների ցանկի պահանջներին։

7. ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՍԱՐՔԵՐԻ ԵՎ ՍԱՐՔՎԱԾՔՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

67. Ամբարձիչներն աշխատանքների անվտանգ կատարման համար պետք է սարքավորված լինեն՝

1) սահմանային բեռի սահմանափակիչով.

2) հողմաչափերով (22 մ-ից ավելի բարձրությամբ բարձրացնող ամբարձիչների համար).

3) սպասարկման ամբողջ գոտում ճոճանի հատակի հորիզոնական դիրքի կողմնորոշման սարքվածքով, ընդ որում ճոճանի հատակի թեքության անկյունը չպետք է գերազանցի 5^0-ը.

4) սպասարկման գոտին սահմանափակող կառուցվածքով (կառուցվածքներով).

5) ամբարձիչը շարժական հենարանների վրա չտեղակայման դեպքում ծնկների բարձրացումը և պտտումը բլոկավորող սարքվածքներով՝ բացառությամբ ձեռքով տեղակայվող պտուտակային շարժական հենարանների.

6) սլաքի աշխատանքային դիրքում գտնվելու դեպքում շարժական հենարանների բարձրացումը բլոկավորող սարքվածքներով՝ բացառությամբ ձեռքով տեղակայվող պտուտակային շարժական հենարանների.

7) հիդրոհամակարգի, էլեկտրաշարժաբերի կամ հիդրոպոմպի շարժաբերի խափանման դեպքում ճոճանի վթարային իջեցման սարքվածքով.

8) ամբարձիչի տեղակայման հիմքից դեպի ներքև գտնվող ճոճանից աշխատողների տարահանման համար նախատեսված սարքվածքով.

9) ամբարձիչի շարժման ժամանակ կարկառված հենարանների ինքնակամ դուրս գալը (պտտվելը) բացառող սարքվածքով.

10) ամբարձիչի թեքության անկյան ցուցիչ սարքվածքով.

11) շարժիչի վթարային կանգնեցման համար ճոճանից և ներքևի կառավարման վահանից «կանգ» մակագրությամբ կոճակներ ունեցող համակարգով.

12) խոսակցային սարքվածքով (22 մ-ից ավելի բարձրությամբ բարձրացնող ամբարձիչների համար)։

68. 67-րդ կետի 1-ին, 4-րդ, 5-րդ, 6-րդ և 11-րդ ենթակետերում նշված անվտանգության սարքերը և սարքվածքները պետք է աշխատեն ամբարձիչի տարրերի շարժման անջատման համար։

69. Ամբարձիչի տարրերի շարժման անվտանգության սարքերի գործելու դեպքում պետք է անջատվեն միայն տարրերը՝ չանջատելով ուժային կայանքը։

70. Սահմանային բեռի սահմանափակիչը, ամբարձիչի անվանական բեռնամբարձության 10 տոկոսից ոչ ավելի գերազանցման դեպքում պետք է ապահովի նախազգուշական ձայնային ազդանշանի ազդարարում և անջատի թռիչքի և բարձրության ավելացման մեխանիզմներն անվանական բեռնամբարձության 110 տոկոսից ավելի բեռնամբարձության ավելացման դեպքում։

71. Սահմանային բեռի սահմանափակիչի գործողությունից հետո պետք է ամբարձիչի բոլոր շարժումները դադարեցվեն և կատարվի ճոճանի բեռնաթափում մինչև թույլատրվող բեռնվածության հասնելը։

72. Երկու ճոճաններով ամբարձիչի համար ձայնային ազդանշանի ազդարարումը և մեխանիզմների անջատումը պետք է ապահովված լինի՝ ելնելով երկու ճոճանների գումարային բեռնավածքից, եթե ամբարձիչի կառուցվածքը նախատեսում է յուրաքանչյուր ճոճանը բեռնավորել ամբարձիչի անվանական բեռնվածությանը հավասար բեռով։

73. Սահմանային բեռի սահմանափակման պաշտպանիչ վահանը կամ ռելային (էլեկտրոնային) բլոկը պետք է կապարակնքված լինի։

74. Ամբարձիչները պետք է սարքվորված լինեն լույսային սարքերով, այդ թվում՝ հեռահար, մոտակա, եզրաչափային և հակամառախուղային լապտերներով՝ կախված ամբարձիչի տեսակից և համապատասխանեն Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի հունիսի 28-ի N 955-Ն որոշմամբ հաստատված՝ ճանապարհային երթևեկության կանոններ և տրանսպորտային միջոցների շահագործումն արգելող անսարքությունների և պայմանների ցանկի պահանջներին։

8. ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՎԱՀԱՆՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

75. Ամբարձիչները պետք է սարքվորված լինեն կառավարման երկու վահաններով որոնցից մեկը ճոճանում, իսկ մյուսը՝ ներքևում, հարմար տեղում կամ ունենա հեռակառավարում։

76. Ճոճանի՝ մինչև 12 մետրը ներառյալ բարձրացմամբ ամբարձիչները թույլատրվում է պատրաստել մեկ կառավարման վահանով, ընդ որում, ճոճանում պետք է լինեն ձայնային ազդանշանի միացման և շարժիչի վթարային անջատման սարքեր։

77. Կառավարման վահանները պետք է տեղակայվեն այնպես, որ հարմար լինի նրանց կառավարումը։

78. Ամբարձիչի կառավարման վահանների բռնակները և կոճակները պետք է հարմարավետ տեղակայված լինեն՝ թույլատրելով ապահովել և մշտապես հետևել ճոճանի տեղափոխություններին։ Բռնակների շարժման ուղղությունը պետք է համապատասխանի ամբարձիչի ճոճանի շարժման ուղղությանը։

79. Ձեռքով կառավարման վահաններում գտնվող բռնակները (կոճակները) պետք է դեպի զրոյական դիրք ինքնավերադարձման սարքավորումներ ունենան։ Միացված վիճակում նրանց կառավարումը պետք է հնարավոր լինի միայն կառավարման բռնակի (կոճակի) անընդմեջ սեղմման դեպքում։ Կոճակները պետք է ամբարձիչի միացված մեխանիզմների շարժման ուղությունը ցույց տվող նշաններ ունենան։

80. Ամբարձիչը կառավարման երկու վահան ունենալու դեպքում պետք է դրանցով միաժամանակյա կառավարումը բացառող բլոկավորում ունենա։

81. Ամբարձիչների կառավարման վահանները պետք է ձայնային ազդանշանի միացման և շարժիչ վթարային անջատման սարքավորումներ ունենան։ Թույլատրվում է օգտագործել ավտոմոբիլի ձայնային ազդանշանը։

82. Մինչև 1000 Վ լարման էլեկտրացանցեր սպասարկման համար նախատեսված ամբարձիչների կառավարման վահանների կառուցվածքը և սարքվածքը, այդ թվում՝ նաև

մալուխները, պետք է ապահովի 0,5 ՄՕհմ-ից ոչ պակաս գալվանական մեկուսության մեկուսացում ամբարձիչի մետաղակառուցվածքի և կառավարման վահանի միջև։

9. ԵՌԱԿՑՄԱՆԸ, ԵՌԱԿՑՄԱՆ ՈՐԱԿԻ ՍՏՈՒԳՄԱՆ ԵՎ ՆՅՈՒԹԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

83. Ամբարձիչների պատրաստման, վերակառուցման, վերանորոգման, դրանց մետաղակառուցվածքների մասերի և մեխանիզմների համար օգտագործվող եռակցման նյութերը պետք է համապատասխանեն նախագծով, տեխնիկական և տեխնոլոգիական փաստաթղթերով նախատեսված նյութերի տեսակին և որակին ներկայացվող պահաջներին։

84. Հաշվարկային տարրերի համար օգտագործվող եռակցման նյութերը պետք է ունենան պատրաստող կազմակերպության կողմից դրանց որակը հաստատող փաստաթուղթ կամ փորձարկված լինեն և ենթարկվեն մուտքային վերահսկողության։

85. Եռակցման նյութերի ընտրության ժամանակ պետք է հաշվի առնվեն ամբարձիչի աշխատանքային և ոչ աշխատանքային վիճակում շրջապատող միջավայրի ջերմաստիճանի (դրական և բացասական) սահմանային արժեքները, տարրերի ծանրաբեռնվածության աստիճանը և շրջապատող միջավայրի ագրեսիվությունը։

86. Ամբարձիչի շահագործման փաստաթղթերում պետք է նշված լինեն եռակցման համար օգտագործվող նյութերի տեսակի և որակի մասին անհրաժեշտ և բավարար տեղեկատվությունը։

87. Ամբարձիչների հաշվարկային տարրերի եռակցման համար նախապատրաստումը և եռակցումը պետք է կատարվեն նախագծված և հաստատված եռակցման տեխնոլոգիայի, գործելակարգի և տեխնոլոգիական փաստաթղթերի պահանջներին համապատասխան՝ հաշվի առնելով եռակցվող արտադրատեսակի առանձնահատկությունները։

88. Եռակցման տեխնոլոգիական փաստաթղթերը պետք է մշակվեն ամբարձիչի փաստաթղթերը մշակողի կամ մասնագիտացված կազմակերպության կողմից՝ ելնելով կատարվող եռակցման միացությունների որակի և հուսալիության ապահովման պայմաններից։

89. Մետաղակառուցվածքի տարրերի հաշվարկային եռակցման միացությունները պետք է կատարվեն եռակցման տեխնոլոգիական փաստաթղթերում նշված եղանակներով՝ օգտագործելով համապատասխան տեսակի և որակի էլեկտրոդներ կամ եռակցման մետաղալարեր։

90. Ամբարձիչների մետաղակառուցվածքների եռակցման համար օգտագործվող եռակցման նյութերը պետք է ապահովեն մետաղի, կարի և եռակցման միացության մեխանիկական հատկությունները (ամրության սահման, հոսունության սահման, հարաբերական երկարացում, ծռման անկյուն, հարվածային մածուցիկություն) կառուցվածքի հիմանական մետաղի նշված հատկությունների ստորին սահմանային արժեքից ոչ փոքր մեծություն՝ տվյալ նյութի համար սահմանված տեխնիկական պայմաններով։

91. Մեկ միացության մեջ տարբեր տեսակի նյութերի օգտագործման դեպքում էլեկտրոդի նյութի մեխանիկական հատկությունները պետք է համապատասխանեն ավելի բարձր ամրության սահման ունեցող նյութի հատկություններին։

92. Մետաղակառուցվածքի եռակցմանը պետք է թույլատրվեն սահմանված կարգով որակավորված եռակցողներ։

93. Մետաղակառուցվածքի տարրերի եռակցման կարերը, ինչպես նաև եռակցված միացությունների հավաքման ժամանակ ժամանակավոր կետակցումները, պետք է կատարեն նույն որակավորում ունեցող եռակցողները՝ օգտագործելով նույն եռակցման նյութերը։

94. Մետաղակառուցվածքի հավաքման գործընթացի ժամանակ եռակցումից առաջ կետակցումները պետք է լիովին մաքրվեն խարամից, ինչպես նաև կատարված կետակցում-

ները կարելի է չհեռացնել, եթե նրանք եռակցման ընթացքում ամբողջովին միաձուլվում են հիմնական կարի հետ։

95. Մետաղակառուցվածքի միացությունների պատասխանատու տարրերի եռակցման կարերի ջերմամշակման տեսակը և նրա ռեժիմը սահմանվում են եռակցման տեխնոլոգիայով, ինչպես նաև ջերմամշակման անհրաժեշտությունը պետք է նախատեսված լինի ամբարձիչի պատարաստման և վերանորոգման համար տեխնիկական պայմաններում՝ հաշվի առնելով պատրաստող կազմակերպության տեխնոլոգիական գործելակարգը։

96. Ամբարձիչների մետաղակառուցվածքի եռակցումը պետք է իրագործվի որակի վրա մթնոլորտային անբարենպաստ գործոնների ազդեցությունը բացառող շինություններում։

97. Բաց օդում ամբարձիչի մետաղակառուցվածքի եռակցումը պետք է իրագործվի հատուկ տեխնոլոգիայով՝ եռակցման տեղերը քամուց և մթնոլորտային տեղումներից պաշտպանող համապատասխան հարմարանքների օգտագործմամբ։

98. Եռակցված մետաղակառուցվածքները պետք է ունենան դրոշմ կամ պայմանական նշան եռակցումն իրականացնող եռակցողի ազգանունը որոշելու համար։ Գծագրում պետք է նշված լինի պայմանական նշանի կամ դրոշմի տեղը և եղանակը, որը պետք է իրականացվի ամբարձիչի շահագործման ընթացքում դրա պահպանումն ապահովող եղանակներով։

99. Ամբարձիչի պատրաստման, վերակառուցման և վերանորոգման ժամանակ եռակցված միացությունների կարերի որակի հսկողությունը պետք է կատարվի տեխնիկական վերահսկողության բաժնի կողմից՝ արտաքին զննումով, չափումներով և տեխնիկական պայմաններով նախատեսված վերահսկողության չքայքայող եղանակներով և մեխանիկական փորձարկումներով։

100. Եռակցված միացությունների վերահսկողությունը պետք է իրագործվի ջերմամշակումից հետո (եթե դա պարտադիր է տվյալ եռակցման միացության համար)։

Եռակցված միացությունների վերահսկողության տվյալները պետք է գրանցվեն համապատասխան փաստաթղթերում (գրանցամատյան, քարտ, տեղեկամատյան և այլն)։

101. Արտաքին զննման և չափման պետք է ենթարկվեն բոլոր եռակցված միացությունները՝ նրանցում հետևյալ արտաքին արատներ հայտնաբերելու նպատակով՝

1) բոլոր տեսակի, չափերի և ուղղությունների ճաքեր.

2) կարի 1000 մմ տեղամասում 100 մմ և ավելի ընդհանուր երկարությամբ տեղային մակահալվածքներ.

3) մինչև 20 մմ հաստությամբ մետաղի վրա, բայց մետաղի հաստության 3 տոկոսից ոչ ավելի 0,5 մմ խորությամբ հալախորշեր.

4) մետաղի 20 մմ-ից ավելի հաստության դեպքում կարի 100 մմ քայլի մեջ կից արատների՝ միմյանցից 50 մմ-ից փոքր հեռավորությամբ 4-ից ավելի 1 մմ տրամագծով ծակեր.

5) թերեռալցված աղեղափոսիկներ.

6) հալքածակեր և խորշեր.

7) համատարած ցանցի տեսքով դասավորված ծակեր.

8) միացվող տարրերի առանցքների բեկվածություն կամ անուղղահայացություն.

9) միացվող տարրերի եզրերի, կարերի չափերի և ձևերի գծագրերից շեղումներ (կարի բարձրության, էջի և լայնության, ուժեղացման հավասարաչափության և այլն).

10) մակահալվածքներ, հալախորշեր, թերեռալցված աղեղափոսիկներ, թերաեռքեր, ծակոտկենություններ և այլ տեխնոլոգիական արատներ։

102. Արտաքին զննման ժամանակ կարի մակերևույթը և նրան հարող հիմնական մետաղի տեղամասերի մակերևույթները կարի երկու կողմերում 20 մմ-ից ոչ պակաս լայնությամբ պետք է մաքրվեն խարամից, ցայտերից, մետաղի հոսվածքից և այլ աղտոտությունից։

103. Եռակցված միացությունների պետք է զննվեն և չափվեն կարի երկու կողմից և ամբողջ երկարությամբ։ Ներքին զննման անհնարինության դեպքում եռակցված միացության զննումը և չափումը կատարվում է միայն արտաքին կողմից։

104. Լուսադիտարկման եղանակով եռակցված միացությունների վերահսկողություն կատարելու դեպքում դա պետք է իրականացնել տեխնիկական պայմանների նշված պահանջներին համապատասխան։

105. Լուսադիտարկման պետք է ենթարկվի վերահսկվող եռակցված միացության կարի երկարության ավելի քան 25 տոկոսը։

106. Վերահսկման պարտադիր տեղերը որոշվում են տեխնիկական պայմաններով և տեխնոլոգիական փաստաթղթերով, իսկ լրացուցիչ վերահսկողության տեղերը՝ տեխնիկական վերահսկողության բաժնի կողմից։

107. Եռակցված միացություններում անթույլատրելի արատների հայտնաբերման դեպքում լուսադիտարկման վերահսկողության պետք է ենթարկվեն վերահսկվող բոլոր միացությունները։ Վերահսկման ժամանակ հայտնաբերված եռակցված կարի արատով հատվածները պետք է կտրվեն և նորից եռակցվեն։

108. Եռակցված միացություններն անհրաժեշտ է անդրաձայնային վերահսկողության ենթարկել ըստ տեխնիկական պայմանների և տեխնոլոգիական փաստաթղթերի պահանջների։ Ստուգման ենթակա են՝

1) պատասխանատու եռակցված կարի 100 տոկոսը (արատատեղերի հայտնաբերման նպատակով).

2) մետաղակառուցվածքների կարերը (հսկվող նմուշի մեխանիկական փորձարկումից ստացված արդյունքների անբավարարության դեպքում)։

109. Եռակցված միացությունների որակը, դրանց ցանկացած եղանակով վերահսկողության իրականացման դեպքում համարվում են անբավարար, եթե ամբարձիչի պատրաստման, վերակառուցման և վերանորոգման ժամանակ տեխնիկական պայման-

ների և սույն տեխնիկական կանոնակարգի պահանջներին չհամապատասխանող ներքին և արտաքին անթույլատրելի արատներ են հայտնաբերվել։

10. ՊԱՇՏՊԱՆԻՉ ԾԱԾԿՈՒՅԹՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

110. Ամբարձիչը, հավաքման միավորները և մասերը քայքայումից պաշտպանելու համար դրանց մակերևույթները պետք է պատվեն լաքաներկային կամ մետաղական և ոչ մետաղական (անօրգանական) ծածկույթով (տեխնիկական վերահսկողության բաժնի կողմից վերջնական ընդունումից հետո)։ Պաշտպանիչ ծածկույթ չի պահանջվում յուղագուռում կամ թանձր յուղի միջավայրում աշխատող մեխանիկական մշակման ենթարկված մասերի համար։

111. Ներկապատումից առաջ մետաղյա մակերևույթների նախապատրաստումը և լաքաներկերով պատումն անհրաժեշտ է կատարել պատրաստող կազմակերպության մշակած տեխնոլոգիական փաստաթղթերի պահանջներին համապատասխան։

112. Ամբարձիչի բոլոր մշակված, բայց ներկման ոչ ենթակա մակերևույթները պետք է պատվեն յուղով կամ այլ պաշտպանիչ ծածկույթով։

113. Ամբարձիչների, մեխանիզմների, հավաքական միավորների և մասերի արտաքին և ներքին մակերևույթների ներկապատումը պետք է իրականացվեն տեխնիկական պայմանների պահանջներին համապատասխան՝ ըստ ներկման գծագրերի և ներկապատվածքի 0,04-0,08 մմ սահմաններում հաստությամբ։

114. Յուղման կետերը, լցման և դատարկման խցանները պետք է ունենան արտադրատեսակի գույնից տարբերվող պայծառ գույն։

115. Փայտե մակերևույթները, ինչպես նաև մետաղական կառուցվածքների արտաքին մակերևույթները պետք է ունենան միատեսակ ներկապատվածք։

116. Մակերևույթները, որոնք անհրաժեշտ է ներկել հավաքումից հետո, պետք է ներկապատվեն նախօրոք։

117. Ներկապատման աշխատանքների կատարման ժամանակ պետք է նախաձեռնվեն անվտանգության միջոցառումներ թունավորման ռիսկերից ապահովելու համար։

11. ՀԻԴՐՈՀԱՄԱԿԱՐԳԻ, ՀԻԴՐԱՎԼԻԿ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԽՈՂՈՎԱԿԱՇԱՐԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

118. Հիդրոհամակարգի և նրան լրակազմող հիդրոսարքավորումները (հիդրոբաշխիչներ, ապահովիչ հիդրոկափույրներ, հեղուկակուտակիչներ, հիդրոգլաններ, հիդրոշարժիչներ և պոմպեր), ինչպես նաև աշխատանքային հեղուկը, խողովակները պետք է որակը հաստատող փաստաթղթեր ունենան։

119. Հիդրոհամակարգի կառուցվածքը պետք է բացառի՝

1) հիդրավլիկ սարքավորումների վնասվելու հնարավորությունը.

2) խողովակաշարերի, ճկափողերի և նրանց միացությունների, մետաղակառուցվածքի հետ նրանց հպումի վնասվելու հնարավորությունը։

120. Հիդրոպոմպի շարժաբերի անջատման դեպքում հիդրոհամակարգը պետք է ապահովի մեխանիզմների ավտոմատ կանգառ և սևեռակում։

121. Խողովակաշարի միացումները, այդ թվում՝ ճկափողերի, մեխանիզմների և սարքերի միացման տեղերը պետք է հերմետիկ լինեն։

122. Հիդրոհամակարգը վերանորոգման և կեղտոտման դեպքերում պետք է ունենա աշխատանքային հեղուկի լրիվ հեռացման հնարավորություն։

123. Հիդրոհամակարգի ճնշման գծի վրա յուրաքանչյուր պոմպի համար պետք է տեղակայվեն ապահովիչ կափույրներ, ճնշումների հետ կապված ռիսկերը բացառելու համար։ Ապահովիչ կափույրներից հեղուկի դատարկումը պետք է իրականացվի հիդրոբաքի մեջ։

124. Հիդրոհամակարգը պետք է ունենա աշխատանքային հեղուկի գետնի վրա թափումը բացառող, հարմար և անվտանգ լցման ու դատարկման, ինչպես նաև հիդրոհամակարգից օդի հեռացման հնարավորություն։

125. Աշխատանքային հեղուկի զտումը պետք է լինի անընդմեջ՝ բացի ապահովիչ կափույրի գործելու դեպքում։ Զտման աստիճանը որոշվում է հիդրոսարքավորումների տեխնիկական փաստաթղթերով՝ սահմանված պահանջները հաշվի առնելով։

126. Յուրաքանչյուր հիդրավլիկ սարքաշղթա, անհրաժեշտության դեպքում, պետք է պաշտպանված լինի աշխատանքային ճնշման բարձրացումից՝ թույլատրելի ճնշման տակ կարգավորված ապահովիչ կափույրի միջոցով։

127. Թույլատրելի ճնշման տակ կարգավորված ապահովիչ կափույրները պետք է կապարակնքվեն ամբարձիչների անվտանգ շահագործման համար պատասխանատու մասնագետի կողմից։

128. Հիդրոսարքավորումների հիմնական բնութագրերը պետք է ընտրվեն այնպես, որպեսզի աշխատանքի ժամանակ հիդրոամբարձիչի կառուցվածքի կրող տարրերի մեջ գերբեռնվածություններ չառաջանան։

129. Հիդրոհամակարգի այն տեղերում, որտեղ անհրաժեշտ է վերահսկել ճնշումը, պետք է նախատեսվեն միացման տարրեր վերահսկիչ չափումների կատարման համար։

130. Ամբարձիչի հիդրոշարժաբերի անջատման դեպքում աշխատող սարքավորումները պետք է հուսալի սևեռակված լինեն։

131.Պոմպի և ապահովիչ հիդրոկափույրի միջև չի թույլատրվում տեղակայել փակիչ արմատուրաներ։

132. Դատարկման գծի վրա տեղակայված զտիչը պետք է ունենա տարաթողման կափույր։ Տարաթողման կափույրի բացման ժամանակ ճնշումը պետք է լինի 0,4 ՄՊա-ից ոչ ավելի։

133. Հիդրոհամակարգի կառուցվածքը պետք է ապահովված լինի զտիչի աղտոտ-վածությունը վերահսկող սարքով։

134. Հիդրոբաքի վրա պետք է ցուցված լինեն աշխատանքային հեղուկի նվազագույն և առավելագույն մակարդակները և ապահովվի դրանց անվտանգ հսկման հնարավորությունը։

135. Աշխատանքային հեղուկի մակարդակն անհրաժեշտ է հսկել միայն յուղաչափիչ ապակու օգնությամբ։

136. Հիդրոամբարձիչում հեղուկների համար մի քանի բաքեր օգտագործելու դեպքում դրանք պետք է ունենան տարբեր մակնշումներ։

137. Ամբարձիչ հիդրոհամակարգի խողովակաշարերը և ճկուն ճկափողերը, անհրաժեշտության դեպքում, պատռվելու ռիսկը բացառելու համար պետք է ամրության փորձարկման ենթարկվեն։

138. Հիդրոամբարձիչի մեքենավարին անմիջապես մոտ գտնվող ճկուն ճկափողերը պետք է պաշտպանված լինեն ապահովիչ պատյանով կամ էկրանով։

139. Հիդրոհամակարգի խողովակաշարերը պետք է հուսալի ամրացված լինեն վտանգավոր տատանումներից (թրթռում), ինչպես նաև դրանց միացումների հերմետի-կության խախտումներից ապահովելու համար։

140. Ճնշումային խողովակաշարերի երկարացումը եռակցման միջոցով արգելվում է։

141. Մշտապես չմիացված կառավարման տարրերը՝ նրանց վրա ազդեցության դադարեցումից հետո պետք է նախնական դիրք հետ վերադառնալու հնարավորություն ունենան և առաջացնեն ամբարձիչի մեխանիզմների կանգնեցում կամ անջատում։

142. Հիդրոամբարձիչի կառավարման համակարգը պետք է ունենա առանձին կառավարում՝

1) ճոճանի աշխատանքային շարժումների համար.

2) հենարանների համար.

3) ամբարձիչի տեղաշարժման մեխանիզմի համար։

143. Հիդրոշարժաբերի խափանման դեպքում պետք է ապահովել ճոճանի վթարային իջեցումը (ընդ որում, իջեցման արագությունը չպետք է գերազանցի 0,2 մ/վրկ-ն), ինչպես նաև ամբարձիչի՝ մինչև անվտանգ վիճակին հասնելը՝ ծնկի (սլաքի) կառավարման հնարավորությունը։

12. ԷԼԵԿՏԱՐՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

144. Ամբարձիչի սնման լարումը պետք է լինի՝

1) փոփոխական հոսանքի դեպքում՝ 400 Վ-ից ոչ ավելի.

2) հաստատուն հոսանքի դեպքում՝ 220 Վ-ից ոչ ավելի։

145. Ամբարձիչների էլեկտրամատակարարումը պետք է կատարել Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի դեկտեմբերի 21-ի N 1943-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրատեղակայանքների սարքվածքին ներկայացվող ընդհանուր պահանջներ» տեխնիկական կանոնակարգի պահանջներին համապատասխան, խուլ հողակցված կամ զրոյամեկուսացված հաստատուն կամ շարժական էլեկտրաէներգիայի աղբյուրներից։

146. Ամբարձիչի մեջ պետք է օգտագործվեն ճկուն մալուխներ և պղնձյա ջիղերով հաղորդալարեր։ Շղթաների մալուխների և հաղորդալարերի ջիղերի կտրվածքը պետք է 1,5 մմ^2 պակաս չլինի։ Մինչև 42 Վ լարում ունեցող շղթաների համար թույլատրվում է օգտագործել 0,5 մմ^2 և ավելի կտրվածքով բազմաջիղային պղնձյա հաղորդալարեր և մալուխներ՝ պայմանով, որ ջիղերի միացումները պետք է կատարվեն զոդմամբ, և հաղորդալարերը մեխանիկական բեռնվածություն չկրեն։ Սույն պահանջները չեն տարածվում անվտանգության սարքերում և սարքվածքներում օգտագործվող մալուխների և հաղորդալարերի վրա։

147. Այն տեղերում, որտեղ մալուխների և հաղորդալարերի մեկուսապատվածքները և թաղանթները կարող են ենթարկվել յուղի ազդեցությանը, անհրաժեշտ է օգտագործել յուղակայուն մեկուսապատվածքով և թաղանթով մալուխներ ու հաղորդալարեր: Թույլատրվում է օգտագործել ոչ յուղակայուն մալուխներ և հաղորդալարեր այն դեպքերում, եթե դրանք անցկացված են խողովակների մեջ և ունեն հերմետիկ միացում ապարատների հետ:

148. Մալուխների և հաղորդալարերի մեխանիկական հնարավոր վնասվածքների տեղերը պետք է ունենան կամ նախատեսված լինի հաղորդագծի պաշտպանություն հնարավոր ռիսկերից խուսափելու համար:

149. Բոլոր շղթաների հաղորդալարերի և մալուխների ջիղերը պետք է ունենան մակնշում:

150. Ամբարձիչի կառավարման համակարգի լարումը չպետք է գերազանցի 42 Վ-ն:

151. Ավտոմոբիլային տեսակի ամբարձիչների աշխատանքային և վերանորոգման լուսավորության լարումը չպետք է գերազանցի 24 Վ-ն:

152. Այլ ամբարձիչների համար վերանորոգման լուսավորության լարումը չպետք է գերազանցի 42 Վ-ն:

153. 42 Վ փոփոխական և 110 Վ հաստատուն լարումներից բարձր լարում ունեցող ամբարձիչներում, ինչպես նաև հաղորդալարերի և մալուխների մեկուսապատվածքի հնարավոր վնասվածքների դեպքում մարդկանց էլեկտրահարումից պաշտպանելու համար էլեկտրասարքավորումները պետք է հողակցվեն կամ զրոյացվեն, որը պետք է համապատասխանի Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի դեկտեմբերի 21-ի N 1943-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրատեղակայանքների սարքվածքին ներկայացվող ընդհանուր պահանջներ» տեխնիկական կանոնակարգի պահանջներին:

154. Խուլ հողակցված զրոյականով հաստատուն կամ շարժական էլեկտրաէներգիայի աղբյուրներից սնվող ամբարձիչների հողակցումը պետք է իրականացվի մետաղակառուցվածքի կողեզրի վրա եռակցված հեղյուսին աշխատանքային զրոյական հաղորդիչը մանեկով ամրացմամբ։ Միացումը պետք է հուսալի լինի զննման համար։

155. Արտածված կառավարման վահանի իրանը (ամբարձիչը գետնից կառավարելու դեպքում) պետք է պատրաստված լինի մեկուսացնող նյութից կամ հողակցված (զրոյացված)՝ երկուսից ոչ պակաս հաղորդիչներով։

156. Ամբարձիչի էլեկտրաընդունիչների պաշտպանիչ հողակցում չի պահանջվում կատարել, եթե էլեկտրաընդունիչները հուսալի հպում ունեն հողակցված կամ զրոյականացված մետաղակառուցվածքի հետ։

157. Ամբարձիչի էլեկտրասարքավորումները պետք է համապատասխանեն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի դեկտեմբերի 21-ի N 1943-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրատեղակայանքների սարքվածքին ներկայացվող ընդհանուր պահանջներ» և շահագործվեն համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի նոյեմբերի 23-ի N 1933-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրակայանքների շահագործման անվտանգության կանոններ» տեխնիկական կանոնակարգերի պահանջներին։

V. ԱՄԲԱՐՁԻՉՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԵՎ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՀԱՆՋՆԵՐ

158. Ամբարձիչները և իր հավաքման միավորները պետք է պատրաստվեն նախագծային փաստաթղթերին համապատասխան, որը պետք է պարունակի նախագծի տեխնիկական փորձաքննության եզրակացություն, տեխնիկական առաջադրանք կամ պայմաններ, համալիր գծագրեր և ամրության հաշվարկներ, արտադրատեսակի փորձարկման և որակի հսկման ծրագրեր կամ եղանակներ և շահագործման փաստաթղթեր։

159. Ամբարձիչները, մեխանիզմները, առանձին մետաղակառուցվածքները, անվտանգության սարքերը և կառուցվածքները պետք է պատրաստվեն արտադրության համար տեխնիկական, տեխնոլոգիական, եռակցման ու նրա որակի վերահսկողության միջոցներ և համապատասխան որակավորված մասնագետներ ունեցող կազմակերպություններում։

160. Ամբարձիչի վերակառուցման և վերանորոգման աշխատանքները պետք է կատարվեն մասնագիտացված կազմակերպությունների կողմից մշակված գծագրերի և հաշվարկների հիման վրա՝ հաշվի առնելով ամբարձիչի փաստացի վիճակը (մաշվածության աստիճանը, վնասվածքների առկայությունը և այլն)։

161. Մի քանի կազմակերպությունների կողմից առանձին պատրաստված հավաքման միավորներով և մասերով (կից փաստաթղթերով) ամբարձիչի լրակազմումը և պատրսատման որակի համապատսխանությունը, ինչպես նաև տեխնիկական փաստաթղթերի, այդ թվում՝ ամբարձիչի անձնագրի ձևակերպումը, կատարվում են ամբարձիչի վերջնական լրակազմում իրականացնող, արտադրող կազմակերպությունը։

162. Ամբարձիչների կամ առանձին մետաղակառուցվածքների պաստրաստման տեխնիկական պայմաններում, ուրիշ ցուցումների հետ համատեղ պետք է նախատեսվեն հավաքման միավորների և պատրաստի արտադրատեսակի ընդունման պահանջները,

ինչպես նաև պարունակեն տեղեկություններ պատրաստման համար օգտագործվող մետաղների և եռակցման նյութերի մասին։

163. Ամբարձիչի շահագործման հրահանգում այլ տեղեկությունների հետ համատեղ պետք է ցուցվեն՝

1) ամբարձիչի զննման և հավաքական միավորների յուղման պարբերականությունը.

2) մետաղակառուցվածքի զննման եղանակները և պարբերականությունը.

3) արագամաշ մասերի ցուցակը և նրանց մաշվածության թույլտվածքները.

4) ամբարձիչի տարրերի սահմանային խոտանման չափանիշները.

5) մետաղակառուցվածքի ամենաշատ հնարավոր մեխանիկական վնասվածքները և դրանց վերացման եղանակները.

6) ամբարձիչի շահագործման և անվտանգ սպասարկման նկատմամբ պահանջները՝ հաշվի առնելով նրա կառուցվածքը.

7) տեխնիկական զննում-վկայագրում անցկացնելու կարգը.

8) ամբարձիչի ծառայության ժամկետը.

9) բարձրության վրա վթարային կանգառի ժամանակ ճոճանից մարդկանց տարահանման եղանակը։

164. Ամբարձիչի պատրաստման որակը պետք է համապատասխանի տեխնիկական պայմանների պահանջներին, իսկ ամբարձիչի կառուցվածքը պետք է թույլատրի նրա ծառայության ժամկետում անվտանգ շահագործումը և համապատասխանի նախագծային փաստաթղթերին։

165. Ամբարձիչի փորձնական նմուշի ընդունման փորձարկումների արդյունքները պետք է ձևակերպվեն արձանագրությամբ։

166. Փորձարկումները պետք է կատարվեն նախագծով նախատեսված ծրագրով և նրան համապատասխան։

167. Յուրաքանչյուր պատրաստված ամբարձիչ, արտադրող կազմակերպությունում ընդունման-հանձնման փորձարկումների ենթարկելուց հետո, պետք է ընդունվի տեխնիկական վերահսկողության բաժնի կողմից և լրակազմվի՝

1) անձնագրով.

2) շահագործման հրահանգով.

3) պատրաստման տեխնիկական պայմաններով կամ ստանդարտով նախատեսված այլ փաստաթղթերով.

4) համապատասխանության սերտիֆիկատի կրկնօրինակով.

5) ամբարձիչի մետաղակառուցվածքի առանձին մասերը (ծունկ, հենարան և այլն) այլ կազմակերպություններում պատրաստման դեպքում դրանց որակը հաստատող փաստաթղթերը պետք է կցվեն լրակազմին։

168. Յուրաքանչյուր նոր արտադրվող ամբարձիչի վրա, տեսանելի տեղում ամրացված մետաղական ցուցանակի վրա պետք է ցուցանշված լինի հետևյալ տեղեկատվությունը՝ պատրաստող կազմակերպության անվանումը, բեռնամբարձությունը, թողարկման տարեթիվը և հերթական համարը։

169. Ամբարձիչների մետաղակառուցվածքների վերակառուցում և վերանորոգում իրականացնող մասնագիտացված կազմակերպությունը պետք է ունենա տեխնիկական պայմաններ՝ մետաղների և եռակցման նյութերի օգտագործման, եռակցման որակի վերահսկման եղանակների, եռակցման միացությունների խոտանման նորմերի և առանձին հավաքման միավորների ու ամբարձիչն ամբողջությամբ ընդունելու կարգի մասին տեղեկություններ պարունակող, ինչպես նաև փաստաթղթերի ձևակերպման կարգի մասին ցուցումներ։

170. Ամբարձիչների վերակառուցում և վերանորոգում իրականացնող կազմակերպությունը պետք է կատարված աշխատանքների բնույթի, օգտագործվող նյութերի և

կատարված փոփոխությունների մասին համապատասխան նշումներ կատարի ամբարձիչի անձնագրում։

171. Ամբարձիչի հաշվարկային մետաղակառուցվածքների եռակցումը սեփական-նատիրոջ ուժերով անցկացնելու դեպքում պետք է իրականացվի նախապես պատրաստված գծագրերի, հաշվարկների հիման վրա և համապատասխանի տեխնիկական փաստաթղթերի, անձնագրի ու շահագործման հրահանգի պահանջներին կամ համաձայնեցված լինի համապատասխան մասնագիտացված կազմակերպության հետ։

VI. ԱՄԲԱՐՁԻՉՆԵՐԻ ԳՐԱՆՑՄԱՆԸ, ԶՆՆՄԱՆԸ ԵՎ ԱՆՎՏԱՆԳ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐ

1. ԱՄԲԱՐՁԻՉՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ ԵՎ ԳՐԱՆՑՈՒՄԸ

172. Ամբարձիչները շահագործման հանձնվելուց առաջ պետք է սույն տեխնիկական կանոնակարգով սահմանված գրանցում և տեխնիկական զննում-վկայագրում անցնեն։

173. Իրավաբանական և ֆիզիկական անձանց սեփականության իրավունքով պատկանող ավտոմոբիլային ամբարձիչները պետք է հաշվառվեն՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի նոյեմբերի 30-ի N 1853-Ն որոշմամբ հաստատված՝ տրանսպորտային միջոցների պետական հաշվառման կարգի պահանջներին համապատասխան և գրանցվեն արտադրական վտանգավոր օբյեկտների ռեեստրում և ենթարկվեն տեխնիկական անվտանգության փորձաքննության՝ համաձայն «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի։

174. Ամբարձիչների վերակառուցման (վերազինման), հիմնական վերանորոգման նախագծային փաստաթղթերը ենթակա են տեխնիկական անվտանգության փորձաքննության՝ համաձայն «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի։

175. Ամբարձիչների օգտագործումը (աշխատանքի թողարկումը) դրա սեփականատիրոջ կամ շահագործող անձի կողմից պետք է իրականացվի 173-րդ և 174-րդ կետերի պահանջները կատարելուց հետո։

2. ԱՄԲԱՐՁԻՉՆԵՐԻ ԶՆՆՈՒՄԸ

176. Ամբարձիչները, որոնց վրա տարածվում են սույն տեխնիկական կանոնակարգի պահանջները, մինչև աշխատանքային թողարկումը (շահագործումը), պետք է շահագործման հրահանգի պահանջներին համապատասխան ծավալով տեխնիկական զննման ենթարկվեն՝ հնարավոր ռիսկերը բացառելու համար։

177. Կայմային տեսակի ամբարձիչների տեխնիկական զննումը պետք է կատարվի շինարարական բեռնատար ամբարձիչներ արտադրող կազմակերպության շահագործման հրահանգի պահանջներին համապատասխան։

178. Շահագործման հրահանգում համապատասխան դրույթների բացակայության դեպքում ամբարձիչների զննումը կատարվում է սույն տեխնիկական կանոնակարգի պահանջներին համապատասխան։

179. Աշխատանքի մեջ գտնվող ամբարձիչների տեխնիկական զննումները պետք է իրականացվեն հետևյալ ժամկետներում՝

1) մասնակի՝ ոչ պակաս 12 ամիսը մեկ.

2) լրիվ՝ ոչ պակաս 3 տարին մեկ.

3) սահմանային բեռի սահմանափակիչի փորձարկումը՝ ոչ պակաս 6 ամիսը մեկ։

180. Ամբարձիչների արտահերթ տեխնիկական զննումներ պետք է կատարվեն՝

1) ամբարձիչի վերակառուցումից (վերազինումից) հետո.

2) ամբարձիչի մետաղակառուցվածքի հաշվարկային տարրերի փոխման կամ հավաքական միավորների եռակցման օգտագործմամբ կատարված վերանորոգումից հետո.

3) սլաքի ծնկի կամ սլաքն ամբողջությամբ փոխելուց հետո.

4) ամբարձիչի հիմնական վերանորոգումից հետո.

5) օգտագործման նորմատիվային ծառայության ժամկետը լրանալուց հետո, եթե ամբարձիչը գտնվում է ծառայության մեջ.

6) սահմանային բեռի սահմանափակիչը փոխելուց հետո։

181. Մաշված ճոպանների և շղթաների փոխելուց, ինչպես նաև տեղափոխումներից հետո նրանց տեղակայման ճշտությունը և ճոպանի ծայրերի ամրացման հուսալիությունն ապահովելու և ստուգելու համար, պետք է ճոճանում տեղակայված անվանական բեռով իրականացվի ճոպանի ձգում՝ ամբարձիչը սարքին վիճակում պահելու համար պատասխանատու մասնագետի կողմից արդյունքները պետք է գրանցվեն ամբարձիչի անձնագրում։

182. Տեխնիկական զննումը կատարվում է ամբարձիչի սեփականատիրոջ հրամանով, նշանակված անվտանգ շահագործման համար պատասխանատու հսկող մասնագետի կողմից, ամբարձիչները սարքին վիճակում պահելու համար պատասխանատու մասնագետի մասնակցությամբ։ Թույլատրվում է պայմանագրային հիմունքներով տեխնիկական զննման գործընթացի կատարումը հանձնարարել մասնագիտացված կազմակերպությանը։

183. Արտադրող կազմակերպության կողմից թողարկված, ինչպես նաև մասնագիտացված կազմակերպությունում վերանորոգման ենթարկված ամբարձիչները, սեփականատիրոջն առաքվելուց առաջ պետք է լրիվ սկզբնական տեխնիկական զննում անցնեն տեխնիկական վերահսկողության բաժնի կողմից։ Զննման տարեթիվը և նրա արդյունքները պետք է գրանցված լինեն ամբարձիչի անձնագրում։

184. Մինչև աշխատանքային թողարկումը՝ ամբարձիչի տեխնիկական զննումները պետք է կատարվեն բացահայտելու համար՝

1) անձնագրի տվյալների, տեխնիկական փաստաթղթերի և սույն տեխնիկական կանոնակարգի պահանջների հետ նրա համապատասխանությունը.

2) աշխատանքների անվտանգ կատարումն ապահովելու նրա սարքինության վիճակը.

3) անվտանգության սարքերի և կառուցվածքների սարքին վիճակը.

4) ամբարձիչի հսկողության և սպասարկման կազմակերպման համապատասխանությունը սույն տեխնիկական կանոնակարգի պահանջների հետ։

185. Ամբարձիչի լրիվ տեխնիկական զննումը պետք է ընդգրկի՝

1) ամբարձիչի (այդ թվում՝ անվտանգության սարքերի և կառուցվածքների) դիտարկումը և աշխատանքի ստուգումը.

2) ստատիկ փորձարկումները.

3) դինամիկ փորձարկումները։

186. Մասնակի տեխնիկական զննման ժամանակ ամբարձիչների ստատիկ փորձարկումներ չեն կատարվում։

187. Ամբարձիչների տեխնիկական զննման ժամանակ աշխատանքի մեջ պետք է դիտվեն և ստուգվեն բոլոր մեխանիզմները, հիդրոսարքավորումները, էլեկտրասարքավորումները, անվտանգության սարքերն ու կառուցվածքները, արգելակները, կառավարման ապարատները, լուսավորությունը և ազդանշանային համակարգը։

188. Ամբարձիչի տեխնիկական զննման ժամանակ նույնպես պետք է արձանագրությամբ ձևակերպվեն և ստուգվեն՝

1) ամբարձիչի մետաղակառուցվածքը և նրանց եռակցման միացությունները (ճաքերի բացակայություն, խեղումներ, քայքայման հետևանքով պատերի փոփոխություն և այլ արատներ).

2) ճոճանի (հարթակի) վիճակը, առանցքների և մատերի ամրացումը.

3) ճոպանների վիճակը և նրանց ամրացումը.

4) ամբարձիչի էլեկտրական հողակցման վիճակը։

189. Ամբարձիչի ստատիկ փորձարկումը կատարվում է շահագործման հրահանգում նշված եղանակով, նրա բեռնունակությունը 50 տոկոսով գերազանցող բեռնվածությամբ, ստուգելու ամբարձիչի և նրա առանձին մասերի ամրությունը, ինչպես նաև կայունությունը։

190. Ստատիկ փորձարկումը պետք է իրագործվի ամբարձիչը հարթ հորիզոնական հարթության վրա տեղակայմամբ, հաշվարկային նվազագույն կայունությանը համապատասխանող դիրքում։

191. Ճոճանով սարքավորված ամբարձիչների ստատիկ փորձարկումը կատարվում է նրա անվանական բեռնունակության 110 տոկոս բեռի զանգվածը ճոճանի մեջ տեղադրմամբ և անվանական բեռնունակության 40 տոկոս բեռի զանգվածը գետնից 100-200 մմ բարձրության վրա ճկուն կախոցով՝ ճոճանից կախված վիճակում 10 րոպե պահելով: Ընդ որում, ամբարձիչի հենարաններից մեկի գետնից կտրվելն այդ դեպքում կայունության կորստի նախանշան չի համարվում:

192. Ամբարձիչը համարվում է փորձարկում անցած, եթե 10 րոպեի ընթացքում բեռի իջեցում տեղի չի ունեցել, ինչպես նաև մետաղակառուցվածքում վնասվածքներ չեն հայտնաբերվել:

193. Անվանական բեռնունակության 150 տոկոս բեռի զանգվածով բեռնված վիճակում ամբարձիչի ցանկացած շարժումն արգելվում է:

194. Ամբարձիչի դինամիկ փորձարկումը կատարվում է ճոճանում անվանական բեռնունակությունից 10 տոկոս գերազանցող զանգվածով բեռի բեռնաբարձման պայմաններում, ամբարձիչի մեխանիզմների և նրանց արգելակների գործողությունների ստուգման նպատակով:

195. Դինամիկ փորձարկումների ժամանակ կատարվում է ճոճանի բոլոր հնարավոր շարժումները երեքից ոչ պակաս պարբերաշրջանով: Ընդ որում, ամբարձիչի հենարաններից մեկի գետնից կտրվելն այդ դեպքում կայունության կորստի նախանշան չի համարվում:

196. Սահմանային բեռի սահմանափակիչի փորձարկումն անհրաժեշտ է համընկացնել տեխնիկական զննման կամ տեխնիկական սպասարկման հետ, բայց ոչ պակաս, քան 6 ամիսը մեկ անգամ: Փորձարկումները կատարվում են ամբարձիչը սարքին վիճակում պահելու համար պատասխանատու մասնագետի ներկայությամբ:

197. Սահմանային բեռի սահմանափակիչը պետք է կարգավորված լինի անվանական բեռով և կապարակնքված: Սահմանային բեռի սահմանափակիչի գործարկման

փորձարկումը պետք է կատարվի անվանական բեռը մինչև 10 տոկոս չգերազանցող բեռով։ Սահմանային բեռի սահմանափակիչի փորձարկման արդյունքները գրանցվում են մեքենավարի հերթափոխային մատյանում։

198. Ամբարձիչների փորձարկման համար սեփականատիրոջ մոտ պետք է առկա լինի վստահելի, զանգվածի փաստացի կշռի նշագրումով փորձարկման բեռների լրակազմ։

199. Տեխնիկական զննման արդյունքները զննումը կատարող մասնագետի կողմից պետք է լրացվեն ամբարձիչի անձնագրում՝ միաժամանակ ցուցելով հաջորդ զննման ժամկետը։

200. Պատրաստող կազմակերպության տարածքում նոր պատրաստված և լրիվ տեխնիկական զննման ենթարկված ամբարձիչի անձնագրի մեջ գրությամբ պետք է հաստատվի, որ այն դիմակայել է ամրության և կայունության փորձարկումներին, որ ամբարձիչը համապատասխանում է տեխնիկական պայմանների պահանջներին, իսկ շահագործող կազմակերպություններում գործող ամբարձիչի համար, որ այն դիմակայել է փորձարկումներին, գտնվում է սարքին վիճակում և համապատասխանում է տեխնիկական պայմանների և սույն տեխնիկական կանոնակարգի պահանջներին։

201. Ամբարձիչի հետագա աշխատանքի համար փորձարկումներից հետո թույլտվությունը տալիս է նրա սեփականատերը կամ շահագործող կազմակերպության անվտանգ շահագործման համար պատասխանատու մասնագետը։

202. Պարբերական զննումները, տեխնիկական սպասարկումը և վերանորոգումը պետք է կատարվեն ամբարձիչի շահագործման հրահանգին համապատասխան։

203. Ամբարձիչի սեփականատերերը ապահովում են 202-րդ կետի աշխատանքների կատարումն ըստ ժամանակացանկի և ժամանակին վերացնում են հայտնաբերված անսարքությունները, որոնք կարող են հավանական կամ հնարավոր վթարների և վնասվածքների պատճառ հանդիսանալ։

204. Տեխնիկական սպասարկման և զննման արդյունքները, ամբարձիչի վերանորոգման տվյալները պետք է նշվեն անձնագրում։

205. Ամբարձիչի տեխնիկական փաստաթղթերով կամ անձնագրով սահմանված պահանջներին համապատասխան՝ ծառայության կամ շահագործման ժամկետն անցած ամբարձիչները պետք է ենթարկվեն փորձագիտական հետազոտության (արատորոշման)՝ նման գործառույթներ իրականացնող համապատասխան կազմակերպությունների կողմից։ Փորձագիտական հետազոտության արդյունքները հետազոտություն անցկացնող կազմակերպության կողմից պետք է նշվեն ամբարձիչի անձնագրի մեջ։

206. Ամբարձիչի սեփականատերը տեխնիկական զննման կամ շահագործման գործընթացի ժամանակ ամբարձիչի պատրաստմանը կամ կառուցվածքին անհամապատասխանություն հայտնաբերելու դեպքում պատրաստող կազմակերպությանը կամ մատակարարին ներկայացնում է պահանջ (հայց)՝ երաշխիքային կտրոնով սահմանված ժամկետում՝ պահանջագրում ներառելով հետևյալ տվյալները՝

1) պահանջ ներկայացնող կազմակերպության կամ շահագործող անձի անվանումը.

2) ամբարձիչի գործարանային համարը և պատրաստման տարեթիվը.

3) անհամապատասխանության (պահանջի) համառոտ բնութագիրը.

4) ձեռնարկված միջոցառումները։

207. Պատրաստող կազմակերպությունը երաշխիքային սպասարկման ժամկետում հաշվի է առնում պատրաստման և կառուցվածքի թերությունները՝ այդ մասին գրառում կատարելով պահանջագրերի հաշվառման մատյանում և ձեռնարկում է միջոցառումներ դրանց վերացման համար։

208. Պատրաստող կազմակերպությունն ամբարձիչը շահագործող անձին կամ սեփականատիրոջը պետք է տեղեկացնի դրա անվտանգ օգտագործման համար բացահայտված թերությունների վերացման եղանակների մասին, ինչպես նաև տրամադրի փաստաթղթերը, փոխման համար անհրաժեշտ մասերը, նյութերը և հանգույցները։

3. ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ ՌԻՍԿԵՐԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ ԵՎ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

209. Ամբարձիչների անվտանգ շահագործման հսկողությունը և սպասարկումը պետք է իրականացվեն սեփականատիրոջ կամ շահագործող անձի կողմից՝ ապահովելով դրանց կատարումը «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և սույն տեխնիկական կանոնակարգի պահանջներին համապատասխան։

210. Ամբարձիչների անհատ սեփականատերերը և կազմակերպության ղեկավարները, շահագործող անձինք պետք է ամբարձիչները պահեն սարքին վիճակում և ապահովեն աշխատանքների անվտանգ պայմաններ, պատշաճ ձևով կազմակերպեն զննման, դիտարկման, վերանորոգման, հսկողության, շահագործման և սպասարկման աշխատանքները և դրանց հետ կապված բոլոր հնարավոր ռիսկերի նվազեցման ու վերացման համար ձեռնարկեն կամ իրականացնեն հետևյալ նվազագույն միջոցառումները՝

1) նշանակեն ուսուցանված և համապատասխան մասնագիտական որակավորում ունեցող պատասխանատու մասնագետներ, այդ թվում՝ ամբարձիչների՝

ա. անվտանգ շահագործման (աշխատանքների անվտանգ կատարման) համար,

բ. սարքին վիճակում պահելու համար,

գ. առնվազն 3 տարին մեկ անգամ «ա» և «բ» ենթակետերում նշված անձանց համար կազմակերպեն մասնագիտական որակավորման դասընթացներ.

2) ամբարձիչները սարքին վիճակում պահելու համար ժամանակին կատարեն վերանորոգման աշխատանքները և սահմանեն կարգ նախապահպանական զննումների, տեխնիկական սպասարկման և վերանորոգման համար.

3) սահմանեն կարգ՝ ամբարձիչներն սպասարկող անձնակազմի, մեքենավարների և ճոճանի մեջ աշխատողների ուսուցման ու գիտելիքների պարբերական ստուգման համար,

ինչպես նաև մասնագետների գիտելիքների ստուգում՝ սույն տեխնիկական կանոնակարգի պահանջների տիրապետման վերաբերյալ.

4) ամբարձիչների աշխատանքների անվտանգ կատարման համար պատասխանատու անձանց՝ մեքենավարների, ճոճանի աշխատողների և սպասարկող անձնակազմի համար մշակեն արտադրական հրահանգներ, մատյաններ, աշխատանքների կատարման նախագծեր, տեխնոլոգիական քարտեր և այլ գործելակարգեր.

5) ամբարձիչների անվտանգ շահագործման համար մասնագետներին ապահովեն կանոններով, հաստիքային հրահանգներով և ղեկավարող ցուցումներով, իսկ սպասարկող անձնակազմին՝ արտադրական հրահանգներով.

6) ապահովեն անձնակազմի կողմից սույն տեխնիկական կանոնակարգի պահանջների կատարումը, իսկ սպասարկող անձնակազմի կողմից՝ նաև արտադրական հրահանգների կատարումը.

7) ապահովեն ամբարձիչներն սպասարկող անձնակազմին և մասնագետներին անհատական պաշտպանության միջոցներով, որոնք պետք է համապատասխանեն Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի նոյեմբերի 11-ի N 1631-Ն որոշմամբ հաստատված «Անհատական պաշտպանության միջոցներ» տեխնիկական կանոնակարգի պահանջներին.

8) ապահովեն աշխատողների առողջության պահպանման համար սանիտարա-հիգիենիկ պայմաններ։

211. Ամբարձիչների անվտանգ շահագործման հսկողության ծառայության կառուցվածքը և թվակազմը որոշվում են կազմակերպության ղեկավարության կամ շահագործող անձի կողմից՝ կախված ամբարձիչների քանակից, շահագործման պայմաններից։

212. Ամբարձիչների անվտանգ շահագործման հսկողության ծառայության կառուցվածքի (պատասխանատու մասնագետի) գործառույթներում պետք է ներառվեն՝

1) հսկողություն ամբարձիչների ամբարձիչ հարմարանքների (առկայության դեպքում) ու տեխնիկական վիճակի և անվտանգ շահագործման համար, իսկ անվտանգության կանոնների խախտման դեպքերում մշակվեն դրանց վերացման միջոցառումներ, այդ թվում՝

ա. ամբարձիչով աշխատանքների ճիշտ կատարման համար,

բ. աշխատանքների կատարման ժամանակ ամբարձիչի ճիշտ տեղակայման համար,

գ. 247-րդ կետով նախատեսված դեպքերում՝ կարգագիր-թույլտվության կիրառման պահպանման համար.

2) սույն տեխնիկական կանոնակարգով նախատեսված դեպքերում կատարվեն ամբարձիչների տեխնիկական զննում և տրվի դրանց շահագործման թույլտվություն.

3) վերահսկողություն՝ համապատասխան կազմակերպությունների կողմից տրված կարգադրությունների կատարման, ինչպես նաև ամբարձիչների պարբերական զննումների և վերանորոգումների ժամանակացանկերի նկատմամբ.

4) սույն տեխնիկական կանոնակարգի պահանջներին համապատասխան՝ ստուգվեն մեքենավարին ամբարձիչի կառավարմանը, իսկ աշխատողներին՝ ամբարձիչի սպասարկմանը թույլտվության կարգի պահպանման նկատմամբ, ինչպես նաև՝

ա. սպասարկող և վերանորոգող անձնակազմի, և

բ. ամբարձիչները սարքին վիճակում պահելու համար պատասխանատու մասնագետների, և

գ. ամբարձիչներով աշխատանքների անվտանգ կատարման համար պատասխանատու անձանց որակավորման և գիտելիքների պարբերական ստուգման հանձնաժողովների աշխատանքների մասնակցության ապահովումը.

5) վերահսկողություն՝ մեքենավարների, ճոճանի մեջ աշխատողների, սպասարկող անձնակազմի, ամբարձիչները սարքին վիճակում պահելու համար մասնագետների և

ամբարձիչներով աշխատանքների անվտանգ կատարման համար պատասխանատու անձանց մոտ արտադրական հրահանգների առկայության և դրանց պահանջների կատարման նկատմամբ.

6) վերահսկողություն՝ ամբարձիչներով աշխատանքների անվտանգ կատարման ժամանակ անվտանգության, աշխատանքների կատարման նախագծերի, տեխնոլոգիական քարտերի և այլ գործելակարգերի կանոնների պահպանման նկատմամբ.

7) վերահսկողություն՝ սեփականատիրոջ կողմից ամբարձիչների առանձնացման (բաշխման) և օբյեկտներ ուղարկելու համար սահմանված կարգի պահպանման նկատմամբ։

213. Ամբարձիչների անվտանգ շահագործման հսկողության համար պատասխանատու մասնագետն ամբարձիչներում անսարքությունների, ինչպես նաև աշխատանքի և սպասարկման ժամանակ սույն տեխնիկական կանոնակարգի պահանջներից խախտումներ հայտնաբերելու ժամանակ պետք է դադարեցնի ամբարձիչի աշխատանքը և միջոցառումներ ձեռնարկի դրանց վերացման համար։

214. Ամբարձիչների անվտանգ շահագործման հսկողության համար պատասխանատու մասնագետը չպետք է թույլատրի, որ ամբարձիչը շահագործվի հետևյալ ռիսկերի առաջացման ժամանակ և դեպքերում՝

1) արգելակների, ճոպանների, շղթաների և նրանց ամրացումների, կեռերի, կարապիկների, ընթացային անիվների, բլոկավորման կառուցվածքների և անվտանգության սարքերի անսարքությունների բացահայտման, ինչպես նաև անձնագրում նշված էլեկտրական սխեմաներից և հիդրոսխեմաներից ունեցած շեղումների.

2) մետաղակառուցվածքում ճաքերի և ձևախեղումների առկայության.

3) ամբարձիչի տեխնիկական զննման կամ օգտագործման նորմատիվային ծառայության ժամկետի ավարտման.

4) վկայական չունեցող մեքենավարների կողմից ամբարձիչների սպասարկման,

ինչպես նաև, երբ նշանակված չեն ամբարձիչը սարքին վիճակում պահելու և աշխատանքների անվտանգ կատարման համար պատասխանատու անձինք.

5) անձնագրի կամ համապատասխան կազմակերպություններում ամբարձիչի գրանցման մասին տեղեկությունների բացակայության.

6) համապատասխան կազմակերպությունների կողմից տրված հանձնարարականների չկատարման։

215. Կազմակերպության անձնակազմից, ամբարձիչը սարքին վիճակում պահելու համար համապատասխան մասնագիտական որակավորում ունեցող պատասխանատու մասնագետի նշանակման հրամանի համարը և տարեթիվը, ազգանունը, անունը, հայրանունը, պաշտոնը և ստորագրությունը պետք է նշված լինեն ամբարձիչի անձնագրում։ Այդ տեղեկությունները պետք է նշվեն ամբարձիչի անձնագրում մինչև համապատասխան կազմակերպություններում ամբարձիչի հաշվառումը և գրանցումը, ինչպես նաև յուրաքանչյուր անգամ նոր մասնագետի նշանակման դեպքում։

216. Ամբարձիչը սարքին վիճակում պահելու համար պատասխանատու մասնագետի գործառույթներում պետք է ներառվեն ամբարձիչների սարքինությունը և ռիսկերի նվազեցումն ապահովող հետևյալ միջոցառումները՝

1) ամբարձիչը և ամբարձիչ հարմարանքները (դրանց առկայության դեպքում) պահել սարքին վիճակում, ըստ ժամանակացանկի կատարել պարբերական ստուգումներ, տեխնիկական սպասարկումներ և վերանորոգումներ, մշտական հսկողություն իրականացնել պարբերական ստուգման գրանցամատյանի ճիշտ լրացման և բացահայտված թերությունների ժամանակին վերացման համար.

2) ամբարձիչների սպասարկումը և վերանորոգումն իրագործել իրենց պարտականությունների կատարման համար անհրաժեշտ գիտելիքներ, ունակություններ, փորձ և որակավորում ունեցող անձնակազմով, կատարել անձնակազմի գիտելիքների պարբերական ստուգումներ.

3) վերահսկել մեքենավարների և վերանորոգող անձնակազմի կողմից ամբարձիչ-ների սպասարկման համար հրահանգների ճիշտ կատարմանը.

4) ժամանակին կատարել ամբարձիչի տեխնիկական զննման, իրենց օգտագործ-ման նորմատիվային ծառայության ժամկետը լրացած ամբարձիչների տեխնիկական արատորոշման և փորձագիտական հետազոտման համար նախապատրաստումը.

5) ամբարձիչն ուղարկել վերանորոգման՝ ըստ ժամանակացանկի.

6) պահպանել ամբարձիչի և ամբարձիչ հարմարանքների (դրանց առկայության դեպքում) անձնագրերը և տեխնիկական փաստաթղթերը, ինչպես նաև վարել անձնա-կազմի գիտելիքների ստուգման և հրահանգավորման գրանցամատյանները.

7) կատարել ամբարձիչների անվտանգ շահագործման և հսկողության վերաբերյալ համապատասխան կազմակերպության և մասնագետի կարգադրագրի պահանջները։

217. Ամբարձիչների հետ կապված ռիսկերի նվազեցման համար նրա սարքին վիճակում պահելու համար պատասխանատու մասնագետը շահագործման հրահանգում նշված տարրերի խոտանման սահմանային չափանիշներին համապատասխան պետք է արգելի ամբարձիչների շահագործումը խոտանման ենթակա տարրերով։

218. Խոտանման պետք է ենթարկվեն ամբարձիչի այն տարրերը, որոնցում հայտնա-բերվել են տեխնիկական պահանջներին չհամապատասխանող հետևյալ արատները՝

1) ճախարակի շառավիղներ՝ ճախարակի առվակի 40 տոկոսից ավելի մաշվածու-թյուն սկզբնականի նկատմամբ.

2) թմբուկներ՝ ցանկացած տեսակի ճաքեր կամ թմբուկի առվակի (ակոսիկի) պրո-ֆիլի մաշվածություն՝ ավելի քան 2 մմ.

3) կեռեր՝ ճաքեր և ճեղատումներ մակերևույթի վրա կամ կեռի ուղղաձիգ կտրված-քում բացվածքի սկզբնական բարձրության 10 տոկոսից ավելի մաշվածություն.

4) արգելակային փոկանիվներ՝ աշխատանքային և նստեցման մակերևույթների վրա դուրս եկող ճաքեր և կոտրվածքներ կամ անվահեցի աշխատանքային մակերևույթի մաշվածություն սկզբնական հաստության նկատմամբ ավելի քան 25 տոկոսով.

5) արգելակային մակարդակներ՝ գամի անցքին մոտեցող ճաքեր և կոտրվածքներ կամ արգելակային մակարդակի հաստության 50 տոկոսից ավելի մաշվածություն սկզբնականի նկատմամբ կամ մինչև գամագլխիկի երևալը.

6) ժանանիվներ և ատամնաանիվներ՝ ատամների կոտրվածքներ կամ ցանկացած չափերի ճաքեր կամ ատամների մաշվածություն՝ հաստությամբ՝ բարձրացման մեխանիզմում ավելի քան 15 տոկոս, պտտման մեխանիզմում ավելի քան 20 տոկոս, բաց փոխանցումներում ավելի քան 25 տոկոս.

7) պտուտակներով մասեր՝ երկուսից ավելի պտուտակաթելի կտրվածքներ կամ զննման ժամանակ պտուտակաթելի նկատելի մաշվածություն կամ պտուտակագլխիկի նիստի տրորում կամ պարուրակի քայքայում.

8) մետաղակառուցվածքներ՝ ծնկի առանցքի անուղղագծություն դելտա L, մմ կամ ծնկի առանցքի անուղղահայացություն դելտա L, մմ հոդակապի առանցքի նկատմամբ L/500, որտեղ L-ն ծնկի առավելագույն թռիչքի երկարությունն է.

9) ճոպաններ՝ մաշվածություն կամ քայքայում ճոպանի լարի սկզբնական տրամագծի նկատմամբ 40 տոկոս և ավելի կամ հյուսի կամ միջուկի կտրվածք։

219. Յուրաքանչյուր արտադրամասում, շինարարական հրապարակում կամ այլ տեղամասում ամբարձիչներով հերթափոխային աշխատանքների կատարման դեպքում յուրաքանչյուր հերթափոխի համար վարպետներից, աշխղեկներից, տեղամասերի պետերից, ինչպես նաև բրիգադիրներից, կազմակերպության ղեկավարության հրամանով պետք է նշանակվեն ամբարձիչներով աշխատանքների անվտանգ կատարման համար պատասխանատու անձինք։

220. Ամբարձիչներով աշխատանքների անվտանգ կատարման համար 219-րդ կետում թվարկված անձանցից պատասխանատու անձի նշանակումը պետք է կատարվի համապատասխան կազմակերպությունում որակավորման հանձնաժողովի կողմից արագացված (խտացրած) ծրագրով՝ պաշտոնական հրահանգների և մեքենավարների ու առասանողների (անհրաժեշտության դեպքում) արտադրական հրահանգների, սույն տեխնիկական կանոնակարգի համապատասխան բաժինների իմացության մասին գիտելիքների ստուգումից հետո: Գիտելիքների ստուգումն անցած անձանց տրվում է համապատասխան վկայական: Տվյալ անձանց գիտելիքների պարբերական ստուգումը պետք է կատարվի յուրաքանչյուր տարին մեկ անգամ:

221. Ամբարձիչով աշխատանքների անվտանգ կատարման համար համապատասխան մասնագիտական որակավորում ունեցող պատասխանատու մասնագետի գործառույթներում պետք է ներառվեն անվտանգությունը և ռիսկերի նվազեցումն ապահովող հետևյալ միջոցառումները՝

1) ամբարձիչների աշխատանքները կազմակերպել և իրագործել ըստ անվտանգության կանոնների, աշխատանքների կատարման նախագծերի և տեխնոլոգիական քարտերի.

2) մեքենավարներին, ճոճանի մեջ աշխատողներին և առասանողներին (նրանց առկայության դեպքում) հրահանգավորել կատարվելիք աշխատանքների անվտանգ կատարման, ամբարձիչների գերբեռնման բացառման, բեռի ճիշտ առասանման, կառչման, ամբարձիչի ճիշտ տեղակայման համար՝ առանձնակի ուշադրություն դարձնելով աշխատատեղում աշխատանքների կատարման պայմանների վրա.

3) ամբարձիչի սպասարկման համար, արգելել ուսուցում չանցած և որակավորման վկայական չունեցող անձնակազմին ամբարձիչի աշխատանքի կատարման ժամանակ որոշել ազդանշան տվող անձի նշանակման անհրաժեշտությունը.

4) օգտագործման համար չթույլատրել անսարք կամ բեռի բեռնունակությանը և բնութագրին չհամապատասխանող և մակնշում չունեցող հանովի ամբարձիչ հարմարանքներ.

5) մեքենավարին ցուցել էլեկտրահաղորդման գծերի մոտ աշխատելիս ամբարձիչի տեղակայման տեղը, տալ աշխատանքների կատարման թույլտվություն և դրա մասին գրառում կատարել հերթափոխային մատյանում.

6) սույն տեխնիկական կանոնակարգի մեջ նշված դեպքերում առանց կարգագիրթույլտվության արգելել աշխատանքների կատարումը.

7) ամբարձիչներով անվտանգ աշխատանքների կատարման համար աշխատողներին ապահովել բոլոր անհրաժեշտ անհատական և կոլեկտիվ պաշտպանության միջոցներով, գույքով, գործիքներով.

8) ստուգել մեքենավարների և ճոճանի մեջ աշխատողների կողմից արտադրական հրահանգների, աշխատանքների կատարման նախագծերի, տեխնոլոգիական քարտերի և ուրիշ գործելակարգերի պահանջների կատարումը։

222. Փոքր թվով ամբարձիչներ (մինչև 3 միավոր) ունեցող՝ կազմակերպության ղեկավարի հրամանով սույն տեխնիկական կանոնակարգի 210-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված՝ ամբարձիչը սարքին վիճակում պահելու համար պատասխանատու մասնագետի և ամբարձիչի անվտանգ շահագործման համար պատասխանատու մասնագետի պարտականությունները կարելի է համատեղել և թույլատրել այն իրականացնել մեկ պատասխանատու մասնագետի կողմից։

223. Այն դեպքերում, երբ ամբարձիչի սեփականատերը կամ շահագործող անձը սույն տեխնիկական կանոնակարգի պահանջներին համապատասխան չի կարող նշանակել պատասխանատու մասնագետներ կամ անձանց, թույլատրվում է նրանց պարտականությունների կատարումը պայմանագրային հիմունքներով այն իրականացնել

մեկ ուրիշ կազմակերպությունում աշխատող և համապատասխան վկայական ունեցող մասնագետին։

224. Ամբարձիչների կառավարման և նրանց սպասարկման համար կազմակերպության ղեկավարության կողմից պետք է նշանակված լինեն համապատասխան որակավորում ունեցող մեքենավարներ, փականագործներ, էլեկտրիկներ, հիդրավլիկներ և ճոճանի աշխատողներ՝ պահպանելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի պահանջները։

225. Ավտոմոբիլային ամբարձիչի կառավարումը թույլատրվում է միայն վարորդական իրավունք ունեցող և ամբարձիչների մեքենավարների ծրագրով համապատասխան կազմակերպությունում ուսուցանված և որակավորման դասընթացներ անցած (վկայական ունեցող) անձին։

226. Ամբարձիչի մեքենավարի պարտականությունների կատարման համար նշանակված աշխատողի որակավորման վկայականում պետք է նշված լինեն այն ամբարձիչների տեսակները, որոնց վրա թույլատրվում է աշխատել։

227. Ամբարձիչի կեռից բեռի կառչման և շրջակապման (առասանման) համար պետք է առասանողներ նշանակվեն։ Որպես առասանողներ կարող են նշանակվել բեռի շրջակապման աշխատանքներ կատարելու համար ուսուցում անցած ճոճանի աշխատողները։ Այդ աշխատողների վկայականում պետք է նշված լինի, որ նա ստացել է նաև բեռառասանողի մասնագիտություն։

228. Այն դեպքերում, երբ ամբարձիչների սպասարկման զոտին չի երևում մեքենավարի կառավարման դիրքից կամ բացակայում է ռադիո և հեռախոսային կապ մեքենավարի և ճոճանում գտնվող աշխատողների միջև, ազդանշաններ տալու համար անհրաժեշտ է ազդանշանորդ նշանակել, որը պետք է տիրապետի ազդանշանների պայմանական նշաններ տալու ձևերին և եղանակներին։

229. Ազդանշանորդներ կարող են նշանակվել միայն որակավորված առասանողներից և ճոճանի աշխատողներից, որոնց նշանակում է ամբարձիչի անվտանգ շահագործման պատասխանատու անձը։

230. Ամբարձիչների մեքենավարները, ճոճանի աշխատողները, էլեկտրամոնտյորները և փականագործները պետք է անցնեն պարտադիր նախնական և պարբերական բժշկական զննություն Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի հուլիսի 15-ի «Արտադրական միջավայրում և աշխատանքային գործընթացի վնասակար ու վտանգավոր գործոնների ազդեցությանը ենթարկվող բնակչության առանձին խմբերի առողջական վիճակի պարտադիր նախնական (աշխատանքի ընդունվելիս) և պարբերական բժշկական զննության անցկացման կարգը, գործոնների, կատարվող աշխատանքների բնույթի, զննության ծավալի, բժշկական հակացուցումների ցանկը և աշխատանքային պայմանների հիգիենիկ բնութագրման կարգը հաստատելու մասին» N 1089-Ն որոշմամբ հաստատված կարգին համապատասխան։

231. Մեքենավարները, փականագործները, էլեկտրամոնտյորները, անվտանգության տեխնիկայի և սարքերի կարգավորողները, առասանողները, ամբարձիչների պատրաստման, շահագործման և սպասարկման գործառույթներում ընդգրկված համապատասխան կադրերը և մասնագետները պետք է լինեն ուսուցանված և ունենան մասնագիտական որակավորում։

232. Մեքենավարը, մի տեսակի ամբարձիչից այլ տեսակի ամբարձիչի վրա աշխատելու համար տեղափոխվելուց առաջ, սույն տեխնիկական կանոնակարգով սահմանված ուսուցում և որակավորում պետք է ունենա, իսկ մի տեսակի ամբարձիչից նույն տեսակի, բայց այլ նմուշի, ցուցանիշի կամ ուրիշ շարժաբերով ամբարձիչի վրա տեղափոխվելիս պետք է ծանոթանա նրա կառուցվածքի և սպասարկման առանձնահատկություններին։

233. Իր մասնագիտության գծով մեկ տարուց ավելի ընդմիջում ունեցող մեքենավարը պետք է նախկին հմտությունները և գիտելիքները վերականգնելու համար որակավորում անցնի հնարավոր պատահական ռիսկերից խուսափելու համար։

234. Սպասարկող անձնակազմի (մեքենավարների, փականագործների, էլեկտրամոնտյորների, անվտանգության սարքերի և կառուցվածքների կարգավորողների և առասանողների) գիտելիքների կրկնվող ստուգումներն ամբարձիչի սեփականատիրոջ կողմից պետք է իրականացվի ոչ ուշ, քան յուրաքանչյուր 12 ամիսը մեկ անգամ։

235. Ամբարձիչների բնականոն սպասարկման համար սեփականատերը մեքենավարներին, փականագործներին, էլեկտրամոնտյորներին, ճոճանի աշխատողներին պետք է ապահովի իրենց իրավունքները, պարտականությունները, աշխատանքների անվտանգ կատարման կարգը և պատասխանատվությունը որոշող արտադրական հրահանգներով, որոնք պետք է ստորագրությամբ հանձնվեն նրանց աշխատանքի թույլտվությունից առաջ։

236. Գործատուն պետք է ապահովի աշխատատեղերում աշխատողների առողջության պահպանմանն ուղղված՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված սանիտարական կանոնների և նորմերի պահանջների կատարումը։

237. Ամբարձիչի մեքենավարներն աշխատանքներն սկսելուց առաջ պետք է իրականացնեն մեխանիզմների, մետաղակառուցվածքի և անվտանգության սարքերի և սարքավորումների դիտարկումներ, զննումներ։

238. Ամբարձիչի զննման և ստուգման արդյունքները մեքենավարները պետք է գրանցեն հերթափոխային մատյանում, որի ձևը, վարման կարգը որոշվում և հաստատվում են ամբարձիչի սեփականատիրոջ կամ կազմակերպության ղեկավարության կողմից։

4. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՆՎՏԱՆԳ ԿԱՏԱՐՄԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ

ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

239. Ամբարձիչն աշխատանքի համար կարող է թույլատրվել միայն այն դեպքում, երբ բարձրացվող բեռի զանգվածը չի գերազանցում նրա թույլատրվելիք բեռնունակությունը, և նա տեղակայված է հենարանների վրա (դրանց առկայության դեպքում)։ Շահագործման ժամանակ չպետք է խախտվեն նրա անձնագրում և շահագործման հրահանգում նշված պահանջները։

240. Շահագործման մեջ գտնվող ամբարձիչներին պետք է ամրացված լինի պարզ կարդացվող ցուցանակ, որտեղ պետք է նշված լինեն ամբարձիչի գրանցման համարը, բեռնունակությունը և հերթական լրիվ կամ մասնակի տեխնիկական զննման տարեթիվը։

241. Համապատասխան տեխնիկական վկայագրում չանցած անսարք ամբարձիչ հարմարանքները, ինչպես նաև պիտակ (խարան) չունեցող հարմարանքները, ապրանքամանները չի թույլատրվում օգտագործել ճոճանի հատակի վրա բեռի բարձրացման (բեռնաթափման) համար և դրանք չպետք է գտնվեն ամբարձիչի աշխատանքների կատարման տեղերում, և բացառվեն դրանց պատահական օգտագործման հետևանքով առաջացող ռիսկերը։

242. Ամբարձիչների շահագործման ժամանակ անհրաժեշտ է միջոցառումներ ձեռնարկել բացառելու համար քամու ազդեցությունից կամ տեղանքի թեքության առկայության դեպքում ամբարձիչների շրջման կամ ինքնակամ տեղաշարժման հնարավորությունը։

243. Կեռով հանդերձված ամբարձիչի համար նրա սեփականատիրոջ կողմից պետք է մշակված լինեն բեռի ճիշտ առասանման ու կառչման եղանակները և ապահովված լինի դրանց գծագրական պատկերների (սխեմաների) տրամադրումն առասանողներին և մեքենավարներին կամ դրանք պետք է փակցված լինեն աշխատանքների կատարման տեղերում։

244. Այն բեռների տեղափոխումը, որոնց համար առասանման սխեմաներ չեն մշակվել, տեղափոխումը պետք է կատարվի ամբարձիչի անվտանգ շահագործման համար պատասխանատու մասնագետի ղեկավարությամբ և ներկայությամբ։

245. Ամբարձիչների սեփականատերերը շահագործող կազմակերպության ղեկավարության հետ համատեղ ամբարձիչի շահագործման ժամանակ անվտանգությունն ապահովելու և վթարները նվազեցնելու գործառույթներում պետք է ներառեն հետևյալ լրացուցիչ միջոցառումները՝

1) մշակեն և ամբարձիչների աշխատանքային տեղերն ապահովեն աշխատանքների կատարման նախագծերով և տեխնոլոգիական քարտերով.

2) ամբարձիչների անվտանգ շահագործման համար պատասխանատու անձանց, մեքենավարներին, ճոճանի մեջ աշխատողներին և անհրաժեշտության դեպքում առասանողներին ծանոթացնեն (ստորագրությամբ) աշխատանքների կատարման նախագծերին.

3) անհրաժեշտության դեպքում առասանողներին ապահովեն տեղափոխվող բեռի զանգվածին և բնույթին համապատասխանող փորձարկված և պիտակավորված հանովի ամբարձիչ հարմարանքներով և ապրանքամաններով (բեռնարկղերով).

4) վերահսկիչ բեռով և ամբարձիչի շահագործման հրահանգում կամ սահմանային բեռի սահմանափակիչի անձնագրում նշված ժամկետներում կատարեն սահմանային բեռի սահմանափակիչի պարբերական փորձարկումները.

5) որոշեն տրված պատվերներով օբյեկտներին ամբարձիչների առանձնացման և ուղարկման կարգը և ապահովեն դրա կատարումը.

6) որոշեն սահմանային բեռի սահմանափակիչի կապարակնքման կարգը։

246. Ամբարձիչների աշխատանքների կատարման տեղերը պետք է ապահովված լինեն աշխատանքների կատարման նախագծով նախատեսված պահանջներին համապատասխան լուսավորությամբ։

247. Ամբարձիչների տեղակայումը և աշխատանքները 42Վ-ից բարձր լարվածության էլեկտրահաղորդագծի կամ օդային էլեկտրական ցանցի եզրային հաղորդալարից 30 մ-ից փոքր հեռավորության վրա պետք է իրականացվեն միայն կարգագիր-թույլտվության (օրինակելի ձևը՝ համաձայն N 1 ձևի) հիման վրա՝ պահպանելով կարգագրի մեջ նշված անվտանգության պայմանների պարտադիր կատարումն աշխատանքի ժամանակ՝ ապահովելով հետևյալ պահանջների կատարումը՝

1) էլեկտրահաղորդման գծերի մոտ աշխատանքների կատարման կազմակերպումը, կարգագիր-թույլտվության տրման և հրահանգավորման կարգը սահմանվում է ամբարձիչի սեփականատիրոջ և աշխատանքի ղեկավարի հրամաններով.

2) կարգագիր-թույլտվությունը մեքենավարին պետք է հանձնվի մինչև աշխատանքների սկսելը.

3) էլեկտրահաղորդման գծերի մոտ ամբարձիչով աշխատանքների կատարումը պետք է իրագործվի աշխատանքների անվտանգ կատարման համար պատասխանատու անձի ներկայության և անմիջական հսկողության տակ, որը պետք է մեքենավարին ցուցի ամբարձիչի տեղակայման տեղը, ապահովի կարգագիր-թույլտվությունով նախատեսված աշխատանքի պայմանների կատարումը և հերթափոխային մատյանում գրառում կատարի աշխատանքների իրագործման թույլտվություն տալու մասին.

4) էլեկտրահաղորդման գծերի պաշտպանական գոտում ամբարձիչներով աշխատանքների կատարման համար կարգագիր-թույլտվությունը տրվում է միայն էլեկտրահաղորդման գիծը շահագործող կազմակերպության ղեկավարության կողմից տրված թույլտվության առկայության դեպքում.

5) ճկուն մալուխներով էլեկտրահաղորդման գծերի մոտ ամբարձիչների աշխատանքների կատարման կարգը որոշվում է գծի սեփականատիրոջ կողմից։ Այդ դեպքում կարգագիր-թույլտվություն տալը պարտադիր չէ։

248. Գործող էլեկտրակայաններում, ենթակայաններում և էլեկտրահաղորդման գծերում աշխատող ամբարձիչների շահագործումը, եթե իրականացվում է էլեկտրակայանների անձնակազմի կողմից, իսկ ամբարձիչների մեքենավարները հրամանագրված և էներգակազմակերպության աշխատողների հաստիքային ցուցակում են ներառված, ապա լարման տակ գտնվող հաղորդալարերի և սարքավորումների մոտ աշխատանքներ կատարելու համար կարգագիր-թույլտվության տրման կարգը պետք է համապատասխանի Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հունվարի 15-ի N 144-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրակայանների և ջերմային ցանցերի ջերմաուժային սարքավորումների շահագործման անվտանգության կանոններ» տեխնիկական կանոնակարգով սահմանված պահանջներին: Ընդ որում, լարման տակ գտնվող հաղորդալարերից ամբարձիչի սլաքի հեռավորությունը պետք է համապատասխանի և փոքր չլինի N 1 աղյուսակում բերված տվյալներից:

Աղյուսակ N 1

Օդային գծի լարումը, ԿՎ	Նվազագույն հեռավորությունը, մ
1	2
մինչև 1	1.5
1-ից մինչև 20	2.0
35-ից մինչև 110	4.0
150-ից մինչև 220	5.0
330	6.0
500-ից մինչև 750	9.0
750-ից մինչև 1150	12.0

249. Ամբարձիչներով աշխատանքների անվտանգ կատարման համար սեփականատերը և աշխատանքները կատարող կազմակերպությունը պետք է կազմակերպեն և իրականացնեն այնպիսի քայլեր, որոնցով հնարավոր կլինի անվտանգության հետևյալ պահանջների պահպանումը, որ՝

1) ամբարձիչով աշխատանքների իրականացման տեղում արգելվում է աշխատանքների հետ անմիջականորեն առնչություն չունեցող մարդկանց ներկայությունը.

2) ամբարձիչի դիտարկման, վերանորոգման, մեխանիզմների և էլեկտրասարքավորումների կարգավորման, մետաղակառուցվածքների զննման և վերանորոգման ժամանակ ամբարձիչի շարժիչը կամ ներանցման հոսանահատիչ սարքվածքը (առկայության դեպքում) պետք է անջատված լինեն.

3) ամբարձիչով շինարարական-հավաքման աշխատանքները պետք է իրագործվեն աշխատանքների կատարման նախագծով, որտեղ պետք է նախատեսվեն՝

ա. տեղակայվող ամբարձիչների համապատասխանությունը շինարարական-հավաքման աշխատանքների անհրաժեշտ բեռնունակության և վերհանման բարձրության պայմաններին,

բ. ամբարձիչների անվտանգ հեռավորության ապահովումը՝ էլեկտրահաղորդման օդային գծերից և ցանցերից, հետիոտների և քաղաքային փոխադրամիջոցների երթևեկության տեղերից, ինչպես նաև շինություններին, շինարարական նյութերի և կառուցվածքների պահեստավորման տեղերին մոտենալու դեպքում,

գ. փորվածքների (առու, փոսրակ, խրամուղի) կամ առուների թեքություններին մոտ ամբարձիչի տեղակայման և աշխատանքների պայմանները,

դ. մի քանի ամբարձիչների անվտանգ աշխատանքի պայմանները,

ե. օգտագործվող ամբարձիչ հարմարանքների ցուցակը և կեռերով սարքավորված ամբարձիչների համար բեռների առասանման գրաֆիկական պատկերը (սխեմա),

զ. բեռի պահեստավորման տեղերը և եզրաչափերը, մերձատար ուղիները և այլն,

է. ամբարձիչի տեղակայման տեղամասի պայմաններից ելնելով՝ աշխատանքների անվտանգ կատարման համար հատուկ միջոցառումներ (շինարարական հրապարակի, հավաքման կամ աշխատանքային գոտիների ցանկապատում), օրվա մութ ժամերին 20 լյուքսից ոչ պակաս լուսավորության աստիճան, իսկ գիշերային հերթափոխի ժամերին ամբարձիչների աշխատատեղերի լուսավորվածության աստիճանը պետք է համապատասխանի Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարի 1996 թվականի օգոստոսի 6-ի N 82 հրամանով հաստատված ցանկի՝ ՀՀՇՆ II-8.03-96 «Արհեստական և բնական լուսավորում» շինարարական նորմերի պահանջներին և այլն։

250. Ամբարձիչի ճոճանից կատարվող աշխատանքները (շինարարական, ներկարարական, լուսատուների սպասարկման և այլն) կարելի է կատարել միայն ճոճանից մարդկանց ընկնելը, էլեկտրական հոսանքի հարվածից, նեղ տեղերում ճոճանի տեղա-

շարժման ժամանակ ճմլվածքներ ստանալը բացառող անհրաժեշտ միջոցառումների մշակման և իրագործման պայմանների դեպքում։

251. Ճոճանի տեղաշարժման ժամանակ անվտանգության ապահովման համար պետք է պահպանվի հետևյալ կարգը՝

1) ճոճան մտնելը և այնտեղից դուրս գալը պետք է կատարվեն նստեցման հարթակից, իսկ ճոճանի բարձրացման և իջեցման ժամանակ նրա մուտքը պետք է փակվի փականային սարքվածքով.

2) ճոճանի աշխատողների բարձրության վրա աշխատելու թույլտվության համար պետք է բժշկական զննման եզրակացություն ունենան, աշխատեն սաղավարտով և ճոճանի կառուցվածքի տարրերին կամ ճարմանդներին ամրացված ապահովիչ գոտիներով.

3) ամբարձիչի աշխատանքային գոտում գտնվող մեքենավարը պետք է սաղա-վարտով լինի.

4) ճոճանի աշխատողներին արգելվում է նստել կամ կանգնել ճոճանի բազրիքի վրա, աշխատանքային գոտու բարձրության ավելացման համար ճոճանի հատակին առարկաներ տեղակայել, ճոճանի ցանկապատի վրայով կռանալ.

5) ամբարձիչի աշխատանքը պետք է դադարեցվի 10 մ բարձրության վրա քամու 10 մ/վրկ արագության դեպքում, ինչպես նաև ամպրոպի, ուժեղ անձրևի, մառախուղի և ձյան տեղալու ժամանակ, երբ դժվարանում է տեսանելիությունը, ինչպես նաև ամբարձիչի անձնագրում նշված միջավայրի ջերմաստիճանից ցածր ջերմաստիճանի դեպքում.

6) ամբարձիչի աշխատանքի ժամանակ ճոճանում աշխատողների և մեքենավարի միջև կապը պետք է պահպանվի անընդհատ՝ մինչ 10 մ բարձրության վրա՝ ձայնով,10 մ-ից ավելի բարձրության վրա՝ նշանային ազդանաշանով, 22 մ-ից ավելի բարձրության վրա՝ ռադիո կամ հեռախոսային կապով.

7) ամբարձիչի տեղաշարժը ճոճանում գտնվող աշխատողներով կամ բեռով արգելվում է.

8) ճոճանում գտնվող բեռի զանգվածը չպետք է գերազանցի անձնագրով սահմանված մեծությանը։

252. Ամբարձիչներով աշխատանքների կատարման համար պետք է հարթակ նախապատրաստվի, որը պետք է բավարարի հետևյալ պահանջների պարտադիր կատարմանը՝

1) մուտքային ճանապարհի առկայությունը.

2) թեքությունը չպետք է գերազանցի անձնագրում նշված անկյան մեծությանը.

3) նոր լցված և չտոփանված գրունտը պետք է անպայման տոփանել և պնդացնել.

4) հարթակի չափերը պետք է ապահովեն ամբարձիչի տեղակայումը բոլոր հենարանների վրա, իսկ թույլ գրունտի վրա՝ հենարանների տակ տեղադրված ամրակայուն տակդիրների վրա, իսկ սայթաքուն գրունտի վրա բութակներով տակդիրների վրա։

253. Ամբարձիչի տեղակայումը պետք է կատարվի այնպես, որ աշխատանքի ժամանակ պտտվող հենահարթակի ցանկացած դիրքի դեպքում նրա հեռավորությունը կառուցվածքներից, բեռների դարսակներից և այլ առարկաներից (սարքավորումներից) լինի 1 մ-ից ոչ պակաս, իսկ փորվածքների շեպերի եզրից ամբարձիչի հենարանի հեռավորությունը պետք է փոքր չլինի N 2 աղյուսակում նշված հեռավորություններից։

Աղյուսակ N 2

Փորվածքի (առու, փոս, խրամուղի) խորությունը (մ)	Փորվածքի թեքության սկզբից մինչև ամբարձիչի հենարանի եզրը հեռավորությունը՝ ըստ չլցված գրունտների տեսակի, մ				
	ավազային և կոպճային	կավա-ավազային	ավազա-կավային	կավային	փխրա-հողային
1	1.50	1.25	1.00	1.00	1.00
2	3.00	2.40	2.00	1.50	2.00
3	4.00	3.60	3.25	1.75	2.50
4	5.00	4.40	4.00	3.00	3.00

5	6.00	5.30	4.75	3.50	3.50

VII. ԱՄԲԱՐՁԻՉՆԵՐԻ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԴԺԲԱԽՏ ԴԵՊՔԵՐԻ ԵՎ ՊԱՏԱՀԱՐՆԵՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅԱՆ, ՀԱՇՎԱՌՄԱՆ ԵՎ ՆՎԱԶԵՑՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

254. Ամբարձիչի սեփականատերը կամ շահագործող անձը պետք է ապահովի, որ ամբարձիչի շահագործման և սպասարկման հետ կապված բոլոր ռիսկերը՝ դժբախտ դեպքերը, պատահարները վերանան և նախաձեռնի բոլոր հնարավոր միջոցառումները դրանց նվազեցման համար՝ կիրառելով սույն տեխնիկական կանոնակարգի պահանջները։

255. Ամբարձիչի սեփականատերերը կամ շահագործող անձինք պետք է ապահովեն, որ ինքնագնաց ավտոմոբիլային ամբարձիչների վարորդ-մեքենավարները կամ մեխանիզացված փոխադրամիջոցների միջոցով քարշակվող (տեղափոխվող) ամբարձիչների վարորդները ճանապարհներով երթևեկելիս պահպանեն և կատարեն «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի հունիսի 28-ի N 955-Ն որոշմամբ հաստատված ճանապարհային երթևեկության կանոններ և տրանսպորտային միջոցների շահագործումն արգելող անսարքությունների և պայմանների ցանկի սահմանված պահանջները։

256. Ամբարձիչի սեփականատերը կամ շահագործող անձն ամբարձիչի շահագործման և սպասարկման հետ կապված, օբյեկտներում տեղի ունեցած յուրաքանչյուր արտադրական պատահարի, վթարի և դժբախտ դեպքի պատճառների բացահայտման, հաշվառման համար գործողությունները պետք է իրականացվեն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի ապրիլի 13-ի N 488-Ն որոշմամբ հաստատ-

ված տեխնածին վթարների, մահացու կամ ծանր ելքով արտադրական դժբախտ դեպքերի տեխնիկական քննության և հաշվառման կարգի պահանջներին համապատասխան։

VIII. ՉԱՓՈՒՄՆԵՐԻ ՄԻԱՍՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ

257. Ամբարձիչ աշտարակների և վերհանների չափումների միասնականության ապահովումը պետք է իրականացվեն «Չափումների միասնականության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ

Ձև N 1

Կարգագիր-թույլտվության ձև

Օդային էլեկտրահաղորդման գծերի մոտ ամբարձիչի աշխատանքների կատարման համար

_____
(կազմակերպության անվանումը)

Կարգագիր-թույլտվություն N _____

Կարգագիրը տրվում է 42 Վ-ից բարձր լարում ունեցող էլեկտրահաղորդման գծերի եզրային հաղորդալարից 30 մ-ից պակաս հեռավորության վրա աշխատանքներ կատարելու համար

1. Մեքենավարին _____
(ազգանունը, անունը, հայրանունը)

_____
(ամբարձիչի տեսակը, գրանցման համարը)

2. Աշխատանքի համար տրված _____

_____
(ամբարձիչը տրամադրող կազմակերպությունը)

3. Տեղամասում _____
(կազմակերպությունը, որին տրամադրված է ամբարձիչը,

_____
աշխատանքների կատարման տեղը, շինարարական հրապարակը,

_____
պահեստը, արտադրամասը և այլն)

4. Էլեկտրահաղորդման գծերի լարումը _____

5. Տեղամասում անվտանգության պայմանները _____
(էլեկտրահաղորդման գծից լարման անջատման

_____
անհրաժեշտությունը, աշխատանքի ժամանակ հորիզոնական ուղղությամբ ամբարձիչի

_____
ամենամոտ մասից ծայրային հաղորդալարի ամենանվազագույն թույլատրելի հեռավորությունը,

_____
ճոճանի տեղաշարժման եղանակը և անվտանգության այլ միջոցներ)

6. Աշխատանքի սկիզբը _____
(ժամը, րոպեն, ամսաթիվը, ամիսը, տարեթիվը)

7. Աշխատանքի վերջը _____
(ժամը, րոպեն, ամսաթիվը, ամիսը, տարեթիվը)

8. Աշխատանքների անվտանգ կատարման համար պատասխանատու _____

(պաշտոնը)

(ազգանունը, անունը, հայրանունը, նշանակման մասին հրամանի համարը և տարեթիվը)

9. Ճռճանի աշխատող _____
(ազգանունը, անունը, հայրանունը)

_____
(վկայականի համարը, վերջին անգամ գիտելիքների ստուգման տարեթիվը)

10. Պաշտպանական գոտում աշխատանքի թույլտվությունը _____
(թույլտվություն տվող

_____
կազմակերպությունը, թույլտվության համարը և տարեթիվը)

11. Կարգագիրը տվեց _____

_____
(պաշտոնը, անունը, ազգանունը, ստորագրությունը)

12. 5-րդ կետում նշված անվտանգության անհրաժեշտ միջոցառումները կատարված են

_____

_____

_____

Աշխատանքների անվտանգ կատարման համար պատասխանատու _____
(ստորագրությունը)

«--------» ---------- թ.

13. Հրահանգն ստացա՝ ամբարձիչի մեքենավար _____
(ստորագրությունը)

«--------» ---------- թ.